# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 31 (1481) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 04, 2010
VOLUME 30, NO. 31 (1481) SATURDAY, SEPTEMBER 04,2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԱԲԻԵՒ. «ԹՈՒՐՔԻՈՅ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԷ ՆԱԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ»


է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Աբիեւ

Պաքուի եւ Անգարայի միջեւ վերջերս ստորագրուած համաձայնագիրը կը նախատեսէ նաեւ զինուորական օգնութիւն Ատրպէյճանին, յայտարարած է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Աբիեւ:

Երկու երկիրներուն միջեւ ռազմավարական գործընկերութեան մասին համաձայնագիրը ստորագրուեցաւ Օգոստոսի կէսերուն՝ Թուրքիոյ նախագահ Աբդուլա Գիւլի Ատրպէյճան կատարած այցելութեան ընթացքին:

Ատրպէյճանական կողմը այս համաձայնագիրը կը նկատէ համարժէք՝ վերջերս ստորագրուած հայ - ռուսական համաձայնագրին:

Խօսելով հայկական կողմէն հնչող այն յայտարարութիւններու մասին, որ պատերազմի վերսկսման պարագային Ռուսաստան Հայաստանին զինուորական օգնութիւն պիտի տրամադրէ, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարը ըսած է, որ այդ, ոչ թէ ուժի, այլ՝ թուլութեան նշան է, եւ աւելցուցած, որ նման պնդումները քաղաքական եւ հոգեբանական բնոյթ կը կրեն:

Միւս կողմէ, Ատրպէյճանի արտաքին գործոց փոխնախարարը հերքած է Նախիջեւանի մէջ թրքական ռազմակայանի տեղակայման մասին լուրերը: Արազ Ազիմով յայտնած է որ, հակառակ սահմանադրական արգելքներու վերացման, այս պահուն Ատրպէյճան իր տարածքին օտար պետութեան ռազմակայան տեղադրելու ծրագիր չունի:

Անցեալ շաբաթ լուրեր տարածուած էին այն մասին, որ Թուրքիոյ նախագահի այցելութեան ժամանակ ստորագրուած թուրք-ատրպէյճանական պայմանագիրը, որու բովանդակութիւնը կը մնայ գաղտնի, կը պարունակէ այնպիսի դրոյթներ, որոնք թոյլ կու տան Նախիջեւանի մէջ թրքական ռազմակայան տեղադրել:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՎ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ ՄԱԿ-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԲԱՆԱՁԵՒԸ ԿԱՐԵՒՈՐ ՉԷ

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան Ստեփանակերտի մէջ յայտարարած է, որ Ղարաբաղի հարցով Ատրպէյճանի ներկայացուցած բանաձեւը, ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին կողմէ ընդունուելու պարագային չի կրնար «էական ազդեցութիւն ունենալ Արցախի եւ Հայաստանի ո՛չ քաղաքական, ո՛չ տնտեսական կեանքում, ո՛չ էլ անվտանգութեան բնագաւառում»:

Օգոստոսի 29-ին աշխատանքային այցով Ստեփանակերտ գտնուող Սերժ Սարգսեան հաստատած է, որ ատրպէյճանցիները ՄԱԿ-ի նստաշրջանի քննարկման պիտի ներկայացնեն բանաձեւ մը, որ հաւանաբար, կողմ քուէարկուի մի քանի տասնեակ երկրներու կողմէ:

Շեշտելով, որ այդ բանաձեւի ընդունումը որեւէ ազդեցութիւն չի կրնար ունենալ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վրայ, Սարգսեան վստահութիւն յայտնած է, որ խաղաղ ճանապարհով Ղարաբաղի հարցի լուծման աջակցող երկրները դէմ կամ ձեռնպահ կը քուէարկեն բանաձեւին:

«Նրանք շատ լաւ գիտակցում են, որ այդպիսի բանաձեւերի ընդունումը չի կարող որեւէ դրական ազդեցութիւն ունենալ բանակցային գործընթացի վրայ»,- յայտարարած է Սերժ Սարգսեան, «կոպիտ սխալ» որակելով Ատրպէյճանի կողմէ նման բանաձեւ ներկայացնելու նախաձեռնութիւնը: «Այդ կոպիտ սխալը մենք պէտք է օգտագործենք մեր նպատակներին հասնելու համար: Ակնյայտ է, որ մեր կողմից եւս քայլեր կը լինեն, եւ այդ քայլերը մեզ կը մօտեցնեն մեր նպատակին», ըսած է ան աւելցնելով. - «Մեր գործունէութիւնը միշտ պէտք է ուղղուած լինի նրան, որ ոչ միայն Ատրպէյճանը, այլ նաեւ մնացած երկրները համոզուած լինեն, որ ետդարձի ճանապարհ չկայ, որ որեւէ կերպ բացառւում է Ղարաբաղի վերադարձն Ատրպէյճանի կազմ, որ Արցախն արդէն իսկ կայացած պետութիւն է»:

2008-ին ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովը ընդունեց Ատրպէյճանի նախաձեռնած առաջին բանաձեւը, որ կոչ կ՛ընէր՝ «հայկական զօրքերը անյապաղ դուրս բերել Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն»:

Այդ բանաձեւին ի նպաստ քուէարկած էին 39 ՄԱԿ-ի անդամ

Շար.ը էջ 4

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԻՆ


Հիլըրի Քլինթըն Յուլիսին Երեւանի մէջ իր ունեցած մէկ ելոյթի ընթացքին

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Հիլըր Քլինթըն պատասխանած է Հարաւային Կովկասի Իրաւապաշտպան ցանցի հայաստանեան կազմակերպութիւններու նամակին, որ իրեն յանձնուած էր վերջերս Երեւան կատարած այցի ժամանակ:

Իրաւապաշտպան ցանցի հայաստանեան 9 անդամ կազմակերպութիւնները Յուլիսի 5-ին Քլինթընի հետ հանդիպման ժամանակ յանձնած էին նամակ մը, որու մէջ կային 5 կէտերէ բաղկացած մտահոգութիւններ՝ 2008 թուականի Մարտի 1-ի սպանութիւններու, ընդդիմութեան ներկայացուցիչներու բանտարկութիւններու, ոստիկանութեան մօտ տեղի ունեցող սպանութիւններու, ինչպէս նաեւ լրատուամիջոցներու եւ լրագրողներու նկատմամբ կիրառուող ճնշումներու վերաբերեալ: Նամակի հեղինակները կոչ կ՛ընէին Միացալ Նահանգներուն՝ ազդել Հայաստանի իշխող վարչակազմի վրայ եւ օգնել Հայաստանի քաղաքացիական հասարակութեան ու հանրութեան լուծել վերոյիշեալ խնդիրները:

Ամերիկայի Պետական Քարտուղարը պատասխանելով նամակին, յայտնած է, որ Միացեալ Նահանգները կը շարունակէ հաւատարիմ մնալ Հայաստանի կառավարութեան եւ ժողովուրդի հետ աշխատելու իր յանձնառութեան՝ ուղղուած տարածաշրջանէն ներս ընդհանուր նպատակներու ամրապնդման, որոնք կը ներառեն խաղաղութիւնը, կայունութիւնը, ժողովրդավարութիւնը եւ տնտեսական բարգաւաճումը:

«Միացեալ Նահանգները հաւատացած է, որ այն նոյն արժէքները, որ ծնունդ տուած են մեր պետութեան՝ որպէս բաց ու ակտիւ ժողովրդավարութեան, ուր անսասան է յարգանքը մարդու իրաւունքներու, որոնց շարքին յատակ

Շար.ը էջ 4

## ԴԱՒՈՒԹՕՂԼՈՒ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ ՆՈՅՆԻՍԿ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐԱՊԷՍ ՉԻ ԲԱՑՈՒԻՐ»

«Նոյնիսկ ժամանակաւորապէս Հայաստանի հետ սահմանը չի բացուիր»,- թուրք լրագրողներուն ըսած է Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարար Ահմեդ Դաւութօղլու: Ան կտրականապէս հերքած է մամուլի մէջ երեւցած լուրերը, թէ Սեպտեմբերին՝ Հայաստանի մէջ տեղի ունեցող ՆԱԹՕ-ի զօրավարժութիւններու օրերուն, պաշտօնական Անգարան կրնայ ժամանակաւորապէս բանալ սահմանը:

«Այդ զօրավարժութիւնները զուտ մարդասիրական բնոյթ ունին եւ նուիրուած են արտակարգ իրավիճակներ դիմակայելու: Որպէս Հիւսիսատլանտեան դաշինքի անդամ պետութիւն՝ Թուրքիան, բնականաբար, կը մասնակցի այդ զօրավարժութիւններուն: Նախապէս, սակայն, ատրպէյճանական լրատուամիջոցներուն եւս արդէն ըսած էի՝ սահմանի բացման հարցը նոյնիսկ չի քննարկուիր: Պէտք է խուսափիլ անիմաստ լուրեր տարածելէ», - ըսած է Դաւութօղլու:

Օգոստոսի 16-ին Պաքու ժամանած Թուրքիոյ նախագահ Աբդուլա Գիւլ խուսափած էր յստակ պատասխան տալ հայ - թրքական սահմանի ժամանակաւոր բացման հաւանականութեան վերաբերող հարցին: Հետագային Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնեաներէն մէկը չբացառեց սահմանի ժամանակաւոր բացման հաւանականութիւնը՝ պնդելով, թէ հակա-

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# «ՄԱՐՏԻ 1»-ԻՑ ԱՆՑԱՒ 2,5 ՏԱՐԻ

*ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ*

*2008թ. «մարտիմէկեան» իրադարձութիւններից 2,5 տարի է անցել, բայց մինչ օրս էլ բացայայտուած չեն ո՛չ Երեւանի կենտրոնում ոստիկանութեան կողմից սպաննուած ՀՀ առնուազն 9 քաղաքացիների մահուան հանգամանքները եւ ո՛չ էլ սպանութիւնների մէջ մեղաւոր անձինք են իրենց արժանի պատիժը ստացել: ՀՀ յատուկ քննչական ծառայութիւնում արդէն 2,5 տարի է, պնդում են, թէ գործի նախաքննութիւնն ընթանում է: Թէ որքան ժամանակ է պէտք, որ մեր իրաւապահներն ու իշխանութիւնները խոստովանեն, որ անկարող են կամ պարզապէս չեն ուզում բացայայտել այս գործերը՝ դժուար է ասել: Այս գործերով, այսպէս կոչուած, ողջամիտ ժամկէտները վաղուց անցել են, բայց ՀՔԾ-ն, հակադարձելով «Մարտի 1»-ի զոհերի իրաւայաջորդների կողմից ընդհանուր իրաւասութեան ու նաեւ վերաքննիչ դատարաններում իրեն ուղղուած «անգործութիւն դրսեւորելու» մեղադրանքներին, պնդում է, թէ «յատուկ քննչականը» օրնիբուն աշխատում է սպանութիւնների հանգամանքներն ու մեղաւորներին բացայայտելու ուղղութեամբ:*

*Յիշեցնենք, որ 2008թ. Մարտի 1-ին Երեւանի կենտրոնում ոստիկանութեան ուժերի կողմից «Չերյոմուխա 7» միջոցի կիրառման արդիւնքում սպաննուել էին ՀՀ քաղաքացիներ՝ Տիգրան Խաչատրեանը, Գոռ Քլոեանն ու Արմէն Ֆարմանեանը: Զաքար Յովհաննիսեանը, Դաւիթ Պետրոսեանը, Գրիգոր Գէորգեանը, Յովհաննէս Յովհաննիսեանն ու Սամուէլ Յարութիւնեանը եւս սպաննուել էին ոստիկանների կողմից՝ հրազէնի կիրառման արդիւնքում: Ե՛ւ ընդհանուր իրաւասութեան, ե՛ւ վերաքննիչ դատարանները մերժեցին «Մարտի 1»-ի զոհերի իրաւայաջորդների հայցերը, որոնցով վիճարկւում էր ՀՔԾ-ի անգործութիւնը եւ փոխհատուցման պահանջ էր ներկայացւում:*

*«Մարտիմէկեան» իրադարձութիւնների զոհերի իրաւայաջորդների ներկայացուցիչ Արտակ Զէյնալեանը «Առաւօտին» տեղեկացրեց, որ վճռաբեկ դատարան են ներկայացուել եւ մուտք են արուել 9 զոհերի իրաւայաջորդների բողոքներն ընդդէմ վերաքննիչ դատարանի կայացրած որոշման: Բայց թէ երբ վճռաբեկը որոշում կը կայացնի գործը վարոյթ ընդունելու կամ այն մերժելու մասին՝ յայտնի չէ: Այս համատեքստում էլ «ողջամիտ ժամկէտ» ասուածը ռեզինի պէս կարելի է ձգել ու ձգել: «Երբ ուզեն, ինչ ուզեն՝ կը պատասխանեն: Օրէնքն ասում է՝ ողջամիտ ժամկէտում, իսկ ողջամիտ ժամկէտը այնքան է, որքան նրանք ուզում են: Ինձ համար ողջամիտ ժամկէտը 2 ամիսն է, բայց իրենց ո՞վ կարող է մի բան հարցնել կամ ասել: Իրենք վճռաբեկ են, ինչ ուզեն՝ կ՚անեն: Երբ էլ պատասխանեն՝ իրենց համար կը լինի «ողջամիտ ժամկէտում»,- ասաց Զէյնալեանը: Աւել է թէ՝ զոհերի հարազատներն ու նրանց ներկայացուցիչները դեռ սպասումի մէջ են: Բայց, անկախ վճռաբեկի որեւէ որոշումից, նրանք հայաստանեան դատական համակարգի հետ որեւէ յոյս չեն կապում: «Հայաստանում մեր անելիքը վճռաբեկով կ՚աւարտենք. ինչ հնարաւոր էր անել այս երկրում՝ արել ենք»,- փաստեց Զէյնալեանը:*

*Հայաստանեան արդարադատութեան հետ որեւէ յոյս չի կապում նաեւ զոհերից մէկի՝ Գոռ Քլոեանի հայրը՝ Սարգիս Քլոեանը: Նա արդէն, երեւի, յոգնել է անընդհատ ասելուց՝ «ես որեւէ յոյս չէի կապում ո՛չ ընդհանուր իրաւասութեան, ո՛չ վերաքննիչ դատարանի հետ, այժմ էլ յոյսեր չեմ փայփայում, որ վճռաբեկ դատարանը արդար լուծում կը տայ մեր պահանջներին եւ այդ գործին»: Ս. Քլոեանի ասելով, ինքն ու զոհերի միւս հարազատները եւս յոյսով սպասում են յաջորդ փուլին՝ Եւրոպական դատարան դիմելուն: «Իշխանութիւններն արդէն ապացուցել են, որ «Մարտի 1»-ի զոհերի հանգամանքները հետաքննելու եւ մեղաւորներին պատասխանատուութեան ենթարկելու որեւէ ցանկութիւն չունեն»,- ասաց Ս. Քլոեանը: Զրուցեցինք նաեւ սպաննուած զինծառայող Տիգրան Աբգարեանի մօր՝ տիկին Ռուզանի հետ: «Ոչ մի յոյս չունեմ, ոչինչ էլ չի լինելու, եւ ընդհանրապէս՝ հիասթափուած եմ բոլորից: Այս կառավարութիւնը մեզ համար ոչինչ չի անում, եւ որքան հասկացան՝ չի էլ պատրաստւում որեւէ բան անել»,- ասաց տիկին Ռուզանը: Ինչպէս պարզեցինք, զոհերից ոեւէ մէկի ծնողն ու հարազատը չի պատրաստւում ձեռքերը ծալած նստել եւ սպասել ՀՔԾ-ի «բացայայտումներին»:*

*10 զոհերից Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեանը, ասաց, որ մինչեւ ՀՀ ԱԺ աշնանային նստաշրջանի մեկնարկը մտադիր են կրկին դիմել ՀՀ-ում ԵԽԽՎ ներկայացուցչութեանը: Տիկին Ալլան արդէն դիմումի տեքստը պատրաստել է եւ կը ներկայացնի միւս 8 զոհերի ծնողներին: «Բոլորն էլ կը ծանօթանան դիմումին, կը ստորագրեն, եւ կը պայմանաւորուենք ԵԽԽՎ հայաստանեան ներկայացուցչութիւն միասին գնալու մասին»,- փոխանցեց տիկին Ալլան:*

*Մայիսին, երբ Հայաստանում էր ԵԽԽՎ նախագահ Մեւլութ Չաւուշօղլուն, զոհերի հարազատները նրա հետ հանդիպեցին, բայց ԵԽԽՎ-ի հետաքրքրութիւնը նրանց նկատմամբ դրանով սահմանափակուեց: Յունիսին ՀՀ հարցով համազեկուցողները, այդ թւում՝ արդէն պաշտօնաթող Կոլոմբիէն, իրենց վերջին համատեղ յայտարարութիւնը տարածեցին, որտեղ «Մարտի մէկի» 10 զոհերի մասին ոչ մի բառ չկար: «Մենք որեւէ արձագանք չէինք էլ ակնկալում, բայց յոյս ունենք, որ Հայաստանի հարցով ԵԽԽՎ համազեկուցողները, այնուամենայնիւ, կը գան Հայաստան, եւ մենք հնարաւորութիւն կ՚ունենանք նրանց հետ հանդիպելու: Չաւուշօղլուն այն ժամանակ մեզ դա խոստացաւ: Բայց համազեկուցողները դեռ Երեւան չեն եկել»,- ասաց տիկին Յովհաննիսեանը: Յոյս ունէ՞ք, որ նրանց այցի եւ ձեզ հետ հանդիպման արդիւնքում ինչ-որ բան կը փոխուի, ու սպանութիւնների առնչութեամբ նախաքննութիւնը տեղից կը շարժուի: «Չգիտեմ, բայց մենք ամէն ինչ պէտք է անենք, որ մեր հարցը քննարկուի»,- մեր հարցադրմանն ի պատասխան՝ ասաց Ա. Յովհաննիսեանը:*

*«ԱՌԱՒՕՏ»*

# ԻՆՉՈՒ ՉԴԺԳՈՀԵՑ ԱՄՆ-Ը

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Հայ-ռուսական յարաբերութեան ֆոնի վրայ հասունացած հասարակական-քաղաքական բանավէճի ֆոնին յաճախակի հնչող հարցերից մէկն այն էր, թէ ինչ վերաբերմունք ունի կատարուածի հանդէպ Ամերիկայի Միացեալ Նահանգները, որը Հարաւային Կովկասում ազդեցութեան համար պայքարում համարւում է Ռուսաստանի հիմնական մրցակիցը:*

*Միացեալ Նահանգների պետդեպարտամենտի պատասխանը, թէ կատարուածը Հայաստանի եւ Ռուսաստանի երկկողմ յարաբերութեան գործն է, ինչ որ չափով բաւարարեց «իսկ Ամերիկա՞ն» հարցադրումը: Բայց հարցադրման որոշ մասը, մասնաւորապէս այն, թէ իսկ ինչու ԱՄՆ դժգոհութիւն չարտայայտեց, այլ գերադասեց լռել, շարունակում է մնալ:*

*Այդ առումով, հարց է առաջանում, թէ իսկ ինչպէս պիտի չլռէին Նահանգները: Նրանք պիտի յայտարարէին Հայաստանի հետ յարաբերութիւնը խզելու մասի՞ն, թէ խզէին Ռուսաստանի հետ յարաբերութիւնը: Ի՞նչ պիտի անէին, որպէսզի արտայայտէին իրենց դժգոհութիւնը:*

*Իրականում, Միացեալ Նահանգները դժգոհութիւն արտայայտելու խնդիր թերեւս չունեն: Բանն այն է, որ Հայաստանի վրայ Ռուսաստանի ազդեցութեան ուժգնութիւնը ամենեւին էլ պայմանաւորուած չէ ռազմակայանների ժամկէտով եւ լիազօրութեամբ: Առիթ ունեցել եմ այդ մասին գրելու: Ռուսաստանի ազդեցութեան բուն խնդիրը Հայաստանի քաղաքական վերնախաւի եւ հասարակութեան մտածողութիւնն է, որը ռուսաֆիկացուած է գրեթէ 100 տոկոսով:*

*Բանն այն է, որ Միացեալ Նահանգները միշտ էլ գիտակցել է այդ իրողութիւնը, ահա թէ ինչու Հայաստանի հանդէպ Նահանգների քաղաքականութիւնը հիմնուած է ոչ թէ մահակի, ինչպէս Ռուսաստանի քաղաքականութեան պարագայում է, այլ արժէքների, մտածողութեան էքսպանսիայի տեսքով: Այսինքն, Նահանգները հասկանում են, որ Հայաստանում մեկնարկային անհամեմատ աւելի առաջնային դիրքեր ունեցող ռուսական մահակի հետ մահակային մրցակցութիւնը անհեռանկար է: Հեռանկարայինն արժէքների, տեխնոլոգիական, մտածողութեան մրցակցութիւնն է: Դրա միջոցով է հնարաւոր յաղթահարել Հայաստանում գերիշխող այն միֆը, որ հայերի բարեկամը, պաշտպանն ու փրկութիւնը միայն ռուսներն են: Իսկ ռազմակայանները եւ մնացեալ այլ իրողութիւններն այդ մտածողութեան հետեւանքն են, ու երբ մտածողութիւնը, ռուսաֆիկացիան եւ ռուսապաշտութիւնը հանրային գիտակցութիւնից չէզոքացուի, ապա դրանց հետեւանքները յաղթահարելն արդէն մեծ հաշուով կը դառնայ տեխնիկայի գործ:*

*Ու պատահական չէ նաեւ, որ Նահանգները Հայաստանում առաւելապէս աշխատում է ոչ թէ քաղաքական դաշտի, այլ քաղաքացիական սեկտորի հետ, ներդրումներ կատարում է հենց այդ ոլորտում: ԱՄՆ յստակ պատկերացնում է, որ Հայաստանի քաղաքական դաշտի պարագայում ամէն ինչ անյոյս է, եւ Ռուսաստանի գերիշխանութիւնն այստեղ գրեթէ կատարեալ է, ինչի մասին վկայեց եւ այն, որ Հայաստանի քաղաքական որեւէ մի ազդեցիկ ուժ չհամարձակուեց յստակ դիրքորոշում եւ կոնկրետ մտահոգութիւններ արտայայտել Հայաստանի վրայ Ռուսաստանի ազդեցութեան աստիճանի դէ ժուրէ աւելացման կապակցութեամբ: Խնդիրն այն է, որ Հայաստանի քաղաքական դաշտը Ռուսաստանի ազդեցութեան դէ ֆակտօ արտայայտութիւնն է:*

*ԱՄՆ համար առաւել արդիւնաւէտ է թւում քաղաքացիական սեկտորում փոփոխութիւն իրականացնելու հեռանկարը, որովհետեւ քաղաքացիները Հայաստանում, ի տարբերութիւն քաղաքական ուժերի, շատ աւելի հասուն են թէ պետութեան, թէ աշխարհի հետ յարաբերութիւնների պատկերացումների եւ ընկալումների մասով: Նրանք պարզապէս ամէն ինչ շատ աւելի կոնկրետ են դիտարկում եւ կոնկրէտութիւն են ակնկալում: Դրա համար էլ Միացեալ Նահանգները աւելի կոնկրետ աշխատում է քաղաքացիական սեկտորի հետ: Ասել, թէ այդ աշխատանքը չունի թերութիւն, բացթողում եւ աներկբայ արդիւնաւէտ է, իհարկէ կը լինի սխալ: Բայց, որքան էլ տարօրինակ չթուայ, այդուհանդերձ, Նահանգները թերեւս միակ սուբիեկտն է, որը Հայաստանի անկախութիւնից յետոյ հայեցակարգուած եւ գործնական յարաբերութիւն է հաստատել Հայաստանի քաղաքացիական սեկտորի հետ:*

*Ահա թէ ինչու պէտք է Նահանգների համար բացարձակապէս աւելորդ լինէր որեւէ դժգոհութեան արտայայտութիւն: Դա չէր փոխելու ոչինչ, հետեւաբար որեւէ իմաստ չունի ոչինչ չփոխող քայլի դիմելը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ** *ՇԱԲԱԹԱԹԵՐԹ*
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԻԳԻԹԵԱՆ. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՊԷՏՔ Է ՅՍՏԱԿԵՑՈՒԷՐ

*Հայաստանում ռուսական բազայի վերաբերեալ նոր փաստաթուղթը պէտք է ձեւակերպուէր այնպիսի յստակութեամբ, որ հետագայում որեւէ մեկնաբանութիւնների տեղիք չտար, գտնում է ՀՀՇ անդամ, ԵԽԽՎ Հայաստանի պատուիրակութեան նախկին ղեկավար Յովհաննէս Իգիթեանը: «Եթէ մենք ինչ-որ ցանկութիւններ ունենք, դա պէտք է գրուած լինի ցանկացած պայմանագրում՝ մանաւանդ Ռուսաստանի հետ ստորագրուող»,- ասաց նա այսօրուայ ասուլիսում:*

*Ըստ բանախօսի, հայ-ռուսական այս փաստաթուղթը ստորագրելուց առաջ Հայաստանի իշխանութիւնները նաեւ պէտք է յստակեցնէին Ռուսաստանի հետ Ադրբեջանին Ս-300 հրթիռային համալիրների հնարաւոր վաճառքի մասին տեղեկատուութիւնը: «Եթէ Ռուսաստանը մեր գործընկերն է, ապա ինչու՞ է զինում Ադրբեջանին»,- նշեց նա: Բանախօսի կարծիքով՝ Ռուսաստանը պէտք է ընդհանրապէս զերծ մնայ հարաւկովկասեան պետութիւններին որեւէ զինատեսակ վաճառելուց, որպէսզի չխախտի ուժերի հաւասարակշռութիւնը:*

*Հ. Իգիթեանը նաեւ մտահոգութիւն յայտնեց, որ Հայաստանում ռուսաստանեան բազայի տեղակայման ժամկէտները տեղափոխուեցին մինչեւ 2044 թուականը՝ մինչեւ դրանց լրանալը, այն դէպքում, որ փաստաթղթի նախորդ տարբերակի դէպքում 25 տարին լրանալուց յետոյ համաձայնագիրը կարող էր 5-ական տարով երկարաձգուէր: Ըստ բանախօսի, Մոսկուան վստահ չէր, որ Երեւանը կարող էր գնալ պայմանագրի ժամկէտի պարբերաբար երկարացմանը, եթէ Ռուսաստանը որեւէ հակահայկական քայլի դիմի:*



*Յովհաննէս Իգիթեան*

*«Որեւէ այլ առիթ ես չեմ տեսնում տասը տարի շուտ երկարացնել ռազմակայանի տեղակայման ժամկէտը»,- ասաց նա, յաւելելով, որ ռուսական կողմը յարմար է գտել փոփոխութիւններ կատարել այս պահին, քանի որ «Ռուսաստանը չի ունեցել եւ չի ունենալու Ռուսաստանին Հայաստանի աւելի ենթարկուող իշխանութիւն, քան այսօր է»:*

*Ինչ վերաբերում է համաձայնագրում սահմանների վերաբերեալ արուած փոփոխութիւններին, Հ.Իգիթեանը, համարում է, որ դա զուտ տերմինների փոփոխութիւն է: Նա յիշեցրեց փաստաթղթի վերաբերեալ ՌԴ ԱԳ նախարար Սերգէյ Լաւրովի այն յայտարարութիւնը, թէ «Ռուսաստանը Հայաստանին պաշտպանում է ոչ թէ սահմաններով, այլ իր ներկայութեամբ»:*

# ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ. «ՑԱՒՈՔ, ՍԱ Է ՄԵՐ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԵԼԻՆ»

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կենտրոնական Վարչութեան անդամ Վահան Շիրխանեանը, մեկնաբանելով Սեպտեմբերի 9-ին ՄԱԿ-ում Ադրբեջանի կողմից առաջ քաշուած հակահայկական բանաձեւը, HayNews.am-ին ասաց.«ՄԱԿ-ը եւ միջազգային որոշ այլ կառոյցներ մինչ այսօր ընդունել են Ադրբեջանի կողմից հիմնաւորապէս խեղաթիւրուած իրողութեան վրայ հիմնուած մի քանի բանաձեւեր եւ որոշումներ: Դրանք չէին կարող , չեն ազդել եւ չեն ազդելու ստատուս-քվոյի վրայ: ՍԴՀԿ-ն խնդիրն այլ հարթութիւնում է տեսնում: Ադրբեջանն 88-ից սանձազերծել է ռասիստական, էթնիկական զտման հասնելու նպատակ հետապնդող պատերազմ, տուեալ պահին իր քաղաքացիներ հանդիսացող հայերի դէմ, որոնք կարողացել են համախմբուել, ապահովել սեփական անվտանգութիւնը, պարտութեան մատնել ռասիստներին, ազատագրել իրենց հողը եւ այդ հողի վրայ ստեղծել անկախ պետութիւն: Մինչեւ զինադադարը ռասիստները նահանջում եւ փախչում էին Արցախի Ինքնապաշտպանութեան Բանակի կազմակերպուած ու հերոսական հակահարուածներից: Ինչու՞ է Ադրբեջանին յաջողուել այս բացարձակ ճշմարտութիւնը նենգափոխել եւ ՄԱԿ-ին (եւ ոչ միայն) համոզել օրակարգ մտցնել իրականութեան հետ ոչ մի կապ չունեցող «օկուպացուած տարածքների մասին» ձեւակերպումով հարցի քննարկում: Ցաւոք, սա է մեր 20-ամեայ դիւանագիտութեան հայելին:*

*Կոսովոյի նախադէպը միջազգային աշխարհին դրել է ընտրութեան առջեւ՝ ինքնորոշման իրաւունքի՞ն տալ գերակայութիւն, թէ՝ տարածքային ամբողջականութեանը: Ադրբեջանական լոբբին յայտնուել է բարդ իրավիճակում: Հայկական դիւանագիտութիւնը չպէտք է բաց թողնի այս հնարաւորութիւնը:*

*Իսկ հայութեան խնդիրը մնում է անփոփոխ՝ ամրապնդել եւ զարգացնել Արցախը, միաւորուել եւ Հայաստանը դարձնել ներգաղթի, սոցիալական արդարութեան եւ բարեկեցութեան երկիր»:*

# ՈՒՍԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՑՈՒԱԾ ԵՆ

*ՍԴՀԿ Սարգիս Տխրունի ուսանողական-երիտասարդական միութեան ատենապետ Գագիկ Մելիքեանը «7օր»-ի հետ զրոյցում ասել է, թէ ՀՀ-ում բուհերի ուսանողական խորհուրդները կուսակցականացուած են:*

*-Շատ բարձր տոկոս են կազմում կուսակցականացուած ուսխորհուրդները: Յատկապէս մանկավարժական համալսարանում դա շատ-շատ է արտայայտւում: Հիմնականում այնտեղ մտնում են եւ ինչ-որ կուսակցութեան ծառայելով՝ փորձում են կարիերա ստեղծել իրենց համար, այլ ոչ թէ նպաստում են հիմնական նպատակին, ինչի համար որ ստեղծուած են, այսինքն՝ լուծելու ուսանողութեան սոցիալական եւ միւս խնդիրները, միջոցառումներ կազմակերպել եւ այլն,-ասել է Գ. Մելիքեանը:*

*Նա նաեւ յաւելել է, որ ուսխորհուրդներում ընդգրկուածներն իշխանական կուսակցութիւններին են պատկանում, քանի որ նրանց լծակները եւ միջոցները շատ են: Իսկ այն ուսանողների հանդէպ էլ, ովքեր անկուսակցական են կամ ընդդիմադիր կուսակցութեան ներկայացուցիչ, ինչ-ինչ հարցերում խտրականութիւն է իրականացւում:*

*Իսկ, օրինակ, ԵՊՀ արեւելագիտութեան ֆակուլտետի ուսխորհուրդն էլ (Գ. Մելիքեանն այդ ֆակուլտետի բակալաւրատն է աւարտել), ՍԴՀԿ Սարգիս Տխրունի ուսանողական-երիտասարդական միութեան ատենապետի խօսքերով, թէեւ ընդգծուած կուսակցականացուած չէ, սակայն շատ թոյլ է աշխատում, ասենք՝ տարին մէկ անգամ ամանորեայ երեկոյթ կազմակերպելով:*

# «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆՆ ԻՐԵՆ ՍՊԱՌԵԼ Է»

*Քաղաքագէտ Ալեքսանդր Մարկարովն անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական խնդիրներին, նշել է, որ ընդդիմութիւնն իրեն սպառել է: «Հայաստանում խնդիր կայ. ընդդիմութիւնը պէտք է իրեն վերաիմաստաւորի: Արհեստական միաւորումները, որոնք ստեղծուել են տարբեր ուժերի կողմից եւ տարբեր հարցերի շուրջ տարբեր դիրքո-րոշումներ ունեն, որոշ մասով անցեալում են արդէն: Նեգատիւ կոալիցիաները, որոնք ստեղծուել են Հայաստանում, իրենց չեն արդարացնում»,- յայտարարեց Մարկարովը:*

*Ըստ նրա՝ Հայաստանի իշխանութիւնն առայժմ շարունակում է մնալ բաւական կայուն եւ որպէս ուժ, որը պատրաստ է իրականացնել այն հռչակուած նպատակները, որոնք յայտարարուել են մինչ ընտրութիւնները:*

*Քաղաքագէտ Երուանդ Բոզոյեանը համամիտ է այս տեսակէտի հետ. «Հայ հասարակութեան մէջ կայ այն տեսակէտը, որ ընդդիմութիւնն իրեն սպառել է: Ընդդիմութիւնից մեծ սպասում հասարակութեան մէջ այսօր չկայ»:*

*Ըստ Բոզոյանի, եթէ ընդդիմութիւնն իրեն սպառել է, դա չի նշանակում, որ երկիրը մնալու է առանց ընդդիմութեան: «Բնականաբար, առաջանում է նոր ուժ, որը կդառնա իրական ընդդիմութիւն, որը կլինի այլընտրանք գործող իշխանութեանը: Այն, որ այդ ուժի պահանջը կա, ակնհայտ է»,- եզրակացրեց բանախօսը:*

# ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՐՔԵՐԸ ԹԷԺԱՆՈՒՄ ԵՆ

*Հայաստանում Ֆրանսիական համալսարանի 29 դասախօսներին աշխատանքից հեռացնելը համալսարանի ռեկտորը որակեց անհրաժեշտութիւն: Լրագրողների հետ հանդիպմանը ռեկտոր Ժոէլ Լը Մորզելեկը փորձեց մի շարք փաստարկներով հիմնաւորել իր այդ որոշումը:*

*Օգոստոսի 2-ին արդէն կասեցուել էին այդ դասախօսների պայմանագրերը: Նրանցից 14-ը դիմել են դատարան՝ վերականգնելու իրենց իրաւունքները: Տիկին Մորզելեկը յայտարարեց, որ իրենք ամէն կերպ փորձել են առաջնորդուել ՀՀ օրէնսդրութեամբ: Ռեկտորի ասելով՝ իրենց ուսումնական պլանից դուրս են եկել մի շարք առարկաներ, որոնց արդիւնքում պէտք է լինէին նաեւ դասախօսների կրճատումներ:*

*Նա նաեւ դժգոհեց դասախօսների կարգապահութիւնից, որն էլ, ըստ նրա, նրանց աշխատանքից հեռացնելու միւս պատճառներից է:*

*Ռեկտորի այս խօսքի ժամանակ ներս մտաւ համալսարանի անգլերէնի ամբիոնի նախկին վարիչ, աշխատանքից հեռացուած Գայանէ Յակոբեանը եւ յայտարարեց. «Այդ տեղեկութիւններն ուղղակի անհեթեթ եւ նոյնիսկ ծիծաղելի են. մենք չէինք կարող ազատուել ոչ պրոֆեսիոնալ լինելու պատճառով», եւ իբրեւ դրա վկայութիւն՝ ներկայացրեց որակաւորման մի շարք սերտիֆիկատներ: Նրան անմիջապէս հեռացրին ասուլիսի սենեակից, իսկ դրսում սպասում էին համալսարանի այլ դասախօսներ:*

# ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐԵԱՆԸ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԷՆՆԵՐԻՆ ԶԳՈՒՇԱՑՐԵԼ Է, ՈՐ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ ՓՈՂ ԽՆԴՐՈՂ ՆԱՄԱԿՆԵՐ ՉՈՒՂԱՐԿԵՆ

*Մոսկուայի տանը, այսօր՝ օգոստոսի 30-ին, տեղի է ունեցել Երեւանի դպրոցների տնօրէնների խորհրդի նիստ, որին մասնակցել են ԿԳ նախարար Արմէն Աշոտեանը, քաղաքապետ Գագիկ Բեգլարեանը, ինչպէս նաեւ վարչական շրջանների ղեկավարները: Մօտ մէկ ժամ հետեւելով նիստի ընթացքին, Գագիկ Բեգլարեանը բաւականին կոշտ ելոյթ է ունեցել, նրան մասնաւորապէս դուր չի եկել տնօրէնի պասիւութիւնը:*

*«Ես նստած նայում էի, թէ մարդիկ այսօրուայ ժողովին ինչ պատրաստակամութեամբ ու ինչ տրամադրուածութեամբ են այստեղ: Մարդիկ կան եկել են օր անցկացնելու, էդ կարգի տնօրէնները ի՞նչ ձեւ պիտի աշխատեն, այ եկէք ստեղից նստած նայէք, անուններ այսօր չեմ ուզում տալ, բայց առանձին բոլորին էլ արդէն գիտեմ՝ ովքեր են: Եկէք միաւորուենք ու փորձենք իւրաքանչիւրս մեր մէջ ման գալ, մեր մէջ փոխուենք»,-բորբոքուած ասել է Բեգլարեանը: Վերջինս ցաւով է նկատել, որ տնօրէնները չարդարացրին իր սպասելիքները, մինչդեռ ինքը քննարկմանը եկել էր՝ «մէկ քայլ առաջ գնալու յոյսով»:*

*Թերեւս ժողովից ստացած վատ տպաւորութիւնների պատճառով, Բեգլարեանը տեղում առաջարկել է միւս տարի հրապարակաւ պատուոգրեր շնորհել կամ նկատողութիւններ յայտարարել տնօրէններին. «Ես գիտեմ՝ ես եկել եմ աշխատանքային ժողովի, մենք պիտի կարողանանք իւրաքանչիւր ժողովին մի քայլ առաջ գնանք: Պէտք է հարցեր լինէին, աշխատէինք, հասկանայինք՝ ապագայում ինչ ենք անելու, յաջորդ տարի դահլիճում պատուոգրեր ու գովասանագրեր պէտք է յանձնենք լաւ ու վատ աշխատանքի համար»: Բեգլարեանը անդրադարձել է նաեւ մի «վիրաւորական» հանգամանքի, տնօրէններին զգուշացնելով, որ գործարարներին փող խնդրող նամակներ չուղարկեն, սպառնացել է թէ անձամբ է վերահսկելու այդ նամակները, նշել է, որ արդէն իր ձեռքի տակ են գտնւում նման բովանդակութեամբ մի քանի նամակներ:*

# ԼՈՒՐԵՐ

## ԱՆԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ ԿՈՆԳՐԷՍԻ ՀԵՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԸ ՄՏՆԻ

*Վերջին ժամանակներս տեղի են ունեցել ԱՄՆ-ի եւ Թուրքիայի յարաբերութիւնների վրայ ստուեր գցող մի շարք իրադարձութիւններ, յայտնում են Թուրքական աղբիւրները:*

*Այդ իրադարձութիւնների շարքում աղբիւրը նշում է Իրանի տեսակէտների նկատմամբ Թուրքիայի աջակցութիւնը՝ Թեհրանի դէմ ՄԱԿ-ի պատժամիջոցների ընդունման հարցով:*

*«Թուրք-ամերիկեան յարաբերութիւններում անհարթութիւնները չտկուեցին Թուրքական պատուիրակութեան՝ Վաշինգտոն կատարած այցի ժամանակ: Ամերիկեան ղեկավարութիւնը հասկացնել տուեց, որ ռազմական ոլորտին վերաբերող շատ հարցեր Թուրքիան պէտք է քննարկի ԱՄՆ Կոնգրէսի ներկայացուցիչների հետ: Այժմ Անկարան Կոնգրէսի հետ երկխօսութեան մէջ կը մտնի ոչ միայն Հայոց ցեղասպանութեան հարցով»,- կարծում է TRT-ն:*

*TRT-ի դիւանագիտական աղբիւրները նաեւ նշել են, որ ընթացիկ տարուայ նոյեմբերին ԱՄՆ Սենատի կազմի 1/3-ը կը փոխուի եւ Վաշինգտոնը զբաղուած կը լինի 2011 Թուականի ընտրութիւններով, հետեւաբար Ցեղասպանութեան մասին բանաձեւը Կոնգրէսի կողմից չի քննարկուի: Նոյն աղբիւրները ուշադրութիւն են դարձնում այն բանին, որ հայկական ու յունական լոբբիին կարող է միանալ նաեւ հրէականը:*

*Թուրքիայի ԱԳ նախարարի օգնական Ֆերիդուն Սինիրլիօղլուի գլխաւորած պատուիրակութեան կողմից վարած բանակցութիւնների ժամանակ մանրամասնօրէն քննարկուել էին նաեւ Իրանին, Իրաքին, Իսրայէլին, Աֆղանստանին, ահաբեկչութեան դէմ պայքարին, Բալկանեան Թերակղզուն, Կիպրոսին, ԵՄ-ին, ՆԱՏՕ-ին, Թուրք-հայկական փոխյարաբերութիւններին առնչուող հարցեր:*

## ԻՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՍԿՍԵԼ ԵՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՍՏԵՂԾԵԼ ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Իրանի փոխնախագահի կողմից հնչեցրած Հայոց ցեղասպանութիւն արտայայտութիւնն առիթ է դարձել, որ Թուրքիայում դժուարութիւններ ստեղծեն իրանցի զբօսաշրջիկների համար: Իրանի փոխնախագահի այդ յայտարարութիւնից շատ չանցած, զարմանալի զուգադիպութեամբ, Իրանից Հաքքարի-Եսենդեր մաքսակէտով Թուրքիա մտած զբօսաշրջիկներով ավտոբուսներին Վանի Բաշքալէ շրջանի Բեըլէշինի ժանդարմերիան Թոյլ չի տուել շարունակել ուղեւորութիւնը:*



*Իրանի փոխնախագահ Համիդ Բաղայի*

*Թուրքական Zaman-ի փոխանցմամբ, Թուրքական ժանդարմերիան պատճառաբանել է, Թէ զբօսաշրջիկներն իրենց հետ իրանական ապրանքներ են տանում: Ժամերով անցակէտում սպասող իրանցի ուղեւորները եւ վարորդները ստիպուած բողոքի ակցիա են իրականացրել շրջանի քայմաքամի տան դիմաց եւ փորձել իրենց հարցերը լուծել: Իրանցի վարորդները նշել են, որ իրենք սահմանը եւ դրանից յետոյ գտնուող 5 անցակէտերը հանգիստ անցել են եւ միայն Բեըլէշինի անցակէտում են նման խնդրի հանդիպում: Վարորդները պնդել են, որ ուղեւորներն իրենց հետ միրգ եւ սնունդ են տանում, որը տեղաւորւում է ամէն անձի համար Թոյլատրելի 430 եւրօ արժողութեան մէջ:*

*Մօտ 300 հոգանոց իրանցիների խմբից 3 հոգի հանդիպել են շրջանի քայմաքամ Բիլգեհան Բայարի հետ եւ ներկայացրել խնդիրը: Թուրք պաշտօնեան խոստացել է ուսումնասիրել խնդիրը եւ համապատասխան յանձնարարականներ տալ:*

*Նշենք, որ իր հերԹին Իրանի ԱԳՆ-ն անդրադարձել է օրեր առաջ Վանում իրանական աւտոբուսի քարկոծման փաստին՝ նշելով, որ նման դէպքերը զգալի վնաս են հասցնում Թուրք-իրանական յարաբերութիւններին:*

*Թուրքական լրատուամիջոցները յայտնում են, որ երկրի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն, պատասխանելով այն հարցին, Թէ ինչպէս է արձագանքել Իրանի փոխնախագահ Համիդ Բաղայիի Հայոց ցեղասպանութեան մասին հնչեցրած յայտարարութեանն, ասել է, որ ինքը Իրանում Թուրքիայի դեսպանատան միջոցով պարզաբանում է խնդրել Իրանի արտաքին գործերի նախարարութիւնից:*

*Համիդ Բաղային «Իրան. Ցաղթանակի Կամուրջ» համաժողովի ժամանակ ասել էր. «Օսմանեան կառավարութիւնը մօտ 100 տարի առաջ՝ 1915 Թուականին ցեղասպանութիւն է իրականացրել որոշ քանակութեամբ հայերի նկատմամբ, ներկայումս Նրանով հանդերձ, որ վերացել է Օսմանեան կառավարութիւնը, դեռեւս Հայաստանի կառավարութիւնը Թուրքիայից ուզում է, որպէսզի այդ խնդրի համար պաշտօնապէս ներողութիւն խնդրի եւ փոխյատուցում վճարի»:*

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱՐ

*Շարունակուած էջ 1-էն*

*երկիրներ, որոնց մեծ մասը Իսլամական Քոնֆերանսի Կազմակերպութեան անդամակցող երկիրներ էին: Բանաձեւը ընդունուած էր, հակառակ այն հանգամանքին, որ շուրջ 150 երկրներ ձեռնպահ մնացած, կամ չէին քուէարկած, իսկ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի անդամ համանախագահ երկրները՝ Միացեալ Նահանգները, Ռուսաստանը եւ Ֆրանսան դէմ քուէարկած էին այդ փաստաթուղթին:*

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ՝ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ԲՈԼՈՐ ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻՆ

*Եւրոպական Լիբերալ Դեմոկրատական եւ Բարեփոխումների կուսակցութիւնը կոչ է արել Հայաստանի իշխանութիւններին անյապաղ ազատ արձակել բոլոր քաղբանտարկեալներին:*

*Կուսակցութեան նախագահ Էննեմի Նեյթս-ԵուԹԹերբրոքի յայտարարութեան մէջ, որը տեղադրած է Եւրոպական Լիբերալ Դեմոկրատական եւ Բարեփոխումների կուսակցութեան պաշտօնական կայքէջում, ասուած է. - «Հայաստանը, լինելով Եւրախորհրդի անդամ երկիր, պէտք է անյապաղ ազատ արձակի բոլոր քաղբանտարկեալներին, քանի որ խօսքի ազատութիւնը եւ համոզմունքների ազատութիւնը Եւրախորհրդի հիմնարար արժէքներից են: Քաղաքական դրդապատճառներով մարդկանց բանտում պահելը եւ նրանց արդար դատաքննութեան իրաւունքից զրկելը հակասում է Եւրախորհրդի անդամ երկրների հիմնարար պարտականութիւններին եւ անկասկած կարող է խոչընդոտել Հայաստանի եւ Եւրամիութեան մերձեցման գործընթացը»:*

*Եւրոպական Լիբերալ Դեմոկրատական եւ Բարեփոխումների կուսակցութեանը Յուլիսի 17-ին դիմել էր Հայոց Համազգային Շարժումը, որն այս տարուայ Մարտից անդամակցում է այդ եւրոպական կուսակցութեանը:*

*«Մենք գրել ենք, որ եԹէ դուք ցանկանում էք, որ հայ հասարակութիւնը հաւատայ եւրոպական արժէքներին եւ ժողովրդավարութեան արժէքներին, ապա ձեր գործունէութեամբ չպէտք է հայ հասարակութեանը հիասթափութեան մատնէք: Մենք եւրոպական երկրների շարքում ենք եւ պարտաւոր ենք ապրել եւրոպական երկրների արժէքներով: Այսինքն՝ ինչքան դա մեր խնդիրն է, նոյնքան էլ եւրոպական կառոյցների խնդիրն է», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց Հայոց Համազգային Շարժման վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը:*

*Իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանի կարծիքով, իշխանութիւնը Էննեմի Նեյթս-ԵուԹԹերբրոքի յայտարարութեան կապակցութեամբ «անելիք չունի»:*

*«Ես գտնում եմ, որ քաղբանտարկեալներ չկան», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասաց Զոհրաբեանը՝ շարունակելով. - «Դա տեղին յայտարարութիւն չէ Հայաստանի նկատմամբ, որովհետեւ այդ անձինք կոնկրետ գործողութիւնների համար են դատապարտուել»:*

*«Եւրոպական Լիբերալ Դեմոկրատական եւ Բարեփոխումների կուսակցութիւնը պէտք է խօսքից անցնի յստակ գործողութիւնների», - «Ազատութիւն» ռատիոկայանին ասաց Քաղբանտարկեալների եւ հալածեալների պաշտպանութեան կոմիտէի համակարգող Վարդան Ցարութիւնեանը:*

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*յանձնառութիւնը մամուլի ազատութեան ապահովման հանդէպ, ազատ եւ ծաղկուն հասարակութեան հիմք կը կազմեն եւ խիստ կարեւոր են Հայաստանի ապագայի համար: Մենք կը պաշտպանենք այդ արժէքները եւ կը շարունակենք մեր ձայնը բարձրացնել ի պաշտպանութիւն այդ արժէքներուն՝ Հայաստանի եւ ամբողջ աշխարհի մէջ», - ըսած է Հիլըրի Քլինթըն իր նամակին մէջ:*

*Հայաստանի իրաւապաշտպանները Պետական Քարտուղարի պատասխանը ընդհանուր առմամբ գնահատեցին «գոհացնող, բայց ընդհանրական ու դիւանագիտական պատասխան»:*

*«Ամենայնդէպս, ես չեմ ակնկալել, որ իւրաքանչիւր հարցի շատ կոնկրետ պատասխան է տալու», - մեկնաբանելով ստացուած պատասխանը «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնեց նամակի տակ ստորագրած կազմակերպութիւններէն՝ «Ասպարէզ» ժուռնալիստներու ակումբի խորհուրդի նախագահ Լեւոն Բարսեղեան:*

*Միացեալ Նահանգներու պետական քարտուղարին ուղղուած նամակի հեղինակներէն՝ իրաւապաշտպան ԱրԹուր Սաքունցի կարծիքով, Թէեւ պատասխանը դիւանագիտական է, բայց սոսկ պատասխան չէ:*

*«Արձագանքը մեր նամակին արդէն իսկ վկայում է այն մասին, որ մարդու իրաւունքներու պաշտպանութեան ու ժողովրդավարութեան հաստատման բնագաւառէն ներս մենք աջակցութիւն ունինք», - յայտնեց Սաքունց:*

*Իշխող Հանրապետական խմբակցութեան քարտուղար Էդուարդ Շարմազանով «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնեց, որ դիմելով Հիլըրի Քլինթընին հայաստանեան իրաւապաշտպանները ճիշդ չեն վարուած:*

*«Ինչքանո՞վ է արդարացուած իրաւապաշտպանների դիմումը այլ պետութեան ներկայացուցչին: Ընդհանրապէս Հայաստանի ներքին խնդիրները դուրս հանելը՝ ես դրա կողմնակիցը չեմ»,- ըսաւ Շարմազանով:*

*Ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի ներկայացուցիչ Վլադիմիր Կարապետեանը համաձայն չէր իշխող կուսակցութեան խօսնակի դիրքորոշման հետ:*

*«Ցաւօք, իշխանութիւնները, որոնք կրում են պատասխանատուութիւն Հայաստանում այդ ոլորտներում բարեփոխումների համար, որեւէ քայլ չեն անում», - յայտարարեց Կարապետեան:*

*«Մեր իշխանութիւնները իրենք ունեն պարտաւորութիւններ յարգելու մարդու իրաւունքները եւ ապահովելու խօսքի ազատութիւնը, այն ինչ Հայաստանում չկայ: ԵԹէ Միացեալ Նահանգները կամ մեր եւրոպական գործընկերները բարձրաձայնում են դրա մասին, յիշեցնում են Հայաստանի իշխանութիւններին իրենց իսկ կողմից ստանձնած պարտաւորութիւնների մասին, սա անհրաժեշտ քայլեր են եւ մենք շնորհակալ ենք, որ իրենք բարձրաձայնում են», - աւելցուց Կարապետեան:*

# ԼՈՒՐԵՐ

## ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ. ՄԵՐ ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՀՐԱՒԻՐՈՒՄ ԵՆՔ ԱՂԹԱՄԱՐ

Թրքական Taraf-ի փոխանցմամբ՝ Թրքական Արեւելեան Անատոլիայի զարգացման գործակալութեան կողմից իրականացուած նախագծով, Աղթամար կղզում տեղադրուած արեւային մարտկոցները 25 տարի կը լուսաւորեն ամբողջ կղզին: Այսինքն, բացի Սուրբ Խաչ եկեղեցուց, կը լուսաւորուեն նաեւ կղզու ճանապարհները, սրճարանները:

130 հազար ԱՄՆ տոլար արժողութեամբ լուսաւորութեան նախագծի նպատակներից մէկն էլ Աղթամար կղզու այցելուների թուաքանակի

Վանի նահագապետ Մունիր Քարաօղլուն անձամբ է փորձարկել Աղթամար կղզին արեւային էներգիայով լուսաւորելու սարքաւորումները, որի ընթացքում հանդէս է եկել յայտարարութեամբ:

Թրքական Haberturk-ի փոխանցմամբ՝ Վանի նահագապետը նշել է, որ 100 տարի անց, Սեպտեմբերի 19-ին, առաջին անգամ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում պատարագ կը մատուցուի եւ յաւելել, որ Վանի ժողովուրդը, պատարագին մասնակցելու համար Վան ժամանած հայերին ըստ արժանւոյն պատուելու համար, անհրաժեշտ քայլեր է ձեռնարկել: Պատմութեան ընթացքում մենք մեր հայ հարեւանների հետ եղբայրաբար եւ բարեկամաբար ենք ապրել: Հիմա էլ ցանկանում ենք նախկինի պէս եղբայաբար եւ բարեկամաբար դիմաւորել եւ պատուել նրանց: Պատարագի անցկացումը կարեւոր քայլ կը լինի կրօնի եւ խղճի ազատութեան տեսանկիւնից» -նշել է Վանի նահանգապետը՝ ամփոփելով, որ իրենք Վան եկող բոլոր հայերին սիրով սպասում են:

Նշենք, որ Աղթամարի Ս.Խաչում տարին մէկ անգամ պատարագ անցկացնելու թոյլտուութեան համար անձամբ զբաղուել է Վանի նահանգապետ Մունիր Քարաօղլուն: Մինչ թոյլտուութիւն ստանալը, երբ Թուրքիայի մշակոյթի նախարարը յայտարարել էր, թէ Աղթամարի եկեղեցին չկայ կրօնական արարողութիւն անցկացնելու համար թոյլտուութիւն ունեցող հաստատութիւնների շարքում, Վանի նահանգապետը հեգնել էր նախարարին՝ ասելով, թէ նախարարի խօսքերը հնութիւն են եւ 2010-ի Սեպտեմբերին անպայման Աղթամարի եկեղեցին կը բացուի կրօնական արարողութիւնների համար: Այդ դէպքից շատ չանցած, պաշտօնապէս թոյլատրուում է տարին մէկ անգամ, Սեպտեմբերի 2-րդ կէսին, որը համընկնում է Վարագայ Խաչի տօնի հետ, պատարագ մատուցել:

## ՄԻՔԱՅԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ «ՄԻԿ» ԵՒ «ՍՕԽՈՅ» ՕԴԱՆԱՒԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆ

Վերջերս ռուսական RT հեռուստակայանէն եւոյթ ունեցաւ ծանօթ գործարար «Միկ» եւ «Սօխոյ» օդանաւաշինութեան ընկերութեան գործադիր տնօրէն Միքայէլ Պօղոսեանը: Ան ըսաւ թէ իր ընկերութիւնը Չինաստանի հետ օդանաւաշինութեան թէքնիք համագործակցութիւն ունի: Մեծագոյն յաճախորդներէն է Ռուսաստանի պաշտպանութեան նախարարութիւնը, որուն վերջին պատուէրն է 150 նոր օդանաւի շինութիւնը: Արդարեւ ներկայ միջազգային շուկայի վրայ մեծ վարկ կը վայելեն «Միկ» օդանաւերը: Իսկ «Սօխոյ T-50» գերձայնային օդանաւը կը մրցի ամերիկայինին հետ եւ աւելի աժան է: Գալով «Սօխոյ Super Jet 100»ին ան մեծ յաջողութիւն գտած է Փարիզի մէջ կայացած միջազգային օդանաւային ցուցահանդէսին:

«Եթէ միջազգային գետնի վրայ կ'ուզենք յառաջդիմել, պէտք է աւելի շատ զարկ տանք զինուորական եւ քաղաքացիական օդանաւորդութեան: «Աէրօֆլօթ» ընկերութեան կողմէ 30 նոր օդանաւերու շինութեան պատուէր ստացած ենք: Ներկայիս սկսած ենք մրցիլ Boing-ի եւ Airbus-ի հետ» նշեց Մ. Պօղոսեան:

Նշենք նաեւ որ Super Jet օդանաւ մը կ'արժէ 25-28 միլիոն տոլար:

## ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՂԱՍԱԲԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Լիբանանի անցեալ շաբթուան դէպքերուն մասին նախարար Ժան Օղասաբեան ըսաւ «Ապահովական կայունութիւնը ժխտող երեւոյթ մըն էր եւ միջադէպը որեւէ ժխտական ազդեցութիւն պիտի չունենայ: Նախարար Օղասաբեան դիտել տուաւ թէ Պէյրութը ապազինեալ քաղաքի մը վերածելու ցանկութիւնը կը բխի քաղաքային ազնիւ եւ ապահով կեցութիւն երաշխաւորելու պարտաւորութենէն եւ ոչ թէ ուղղուած է համայնքի մը, կամ անհատի մը դէմ:

Նախարար Ժ. Օղասաբեան դիտել տուաւ նաեւ որ ապօրէն զէնքի դէմ արշաւը հզօր բանակ ունենալու ցանկութիւնը չի նշանակեր հարուածի թիրախ դարձնել դիմադրութեան զէնքը: Այսուհանդերձ անընդունելի գտաւ երկրի մէջ գործող ապահովական յանձնախումբերու գոյութեան սկզբունքը: Ինչպէս նաեւ ստիպողութեան տակ ապահովութիւն պարտադրելու ոճը: Օղասաբեան շատ հաւանական նկատեց կառավարութեան կողմէ պետական եւ վարչական կարգ մը նշանակումներ կատարելու ծրագիրը:

## ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՈՒԽՏԱՎԱՅՐ



ԱԼԻՍԻԱ ԳԷՈՐԳԵԱՆ

Օգոստոսի 25- ին աւարտուեցին Արցախի Տիգրանակերտի 2010 թուականի հնագիտական պեղումները, որի արդիւնքներն «Արմատեէ ակումբում այսօր ամփոփել է հնագիտական արշաւախմբի ղեկավար Համլետ Պետրոսեանը: Վերջինի խօսքով Տիգրանակերտը դառնում է ուխտավայր, որը դէպի իրեն է ձգում հազարաւոր մարդկանց:

«Սա իհարկէ ուրախալի է, սակայն յուշարձանի պահպանման առումով որոշակի խնդիրներ է առաջացնում»,- ասել է արշաւախմբի ղեկավարը:

Տիգրնակերտի 2010 թուականի պեղումները սկսուեցին Յունիսի կէսին ու աւարտուեցին Օգոստոսի 25- ին: ԼՂՀ իշխանութիւնների ֆինանսաւորմամբ աշխատանքներն իրականացնում է ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի Արցախի հնագիտական արշաւախումբը՝ պատմական գիտ. դոկտոր, ԵՊՀ Մշակութաբանութեան ամբիոնի վարիչ Համլետ Պետրոսեանի ղեկավարութեամբ: Հնագիտական աշխատանքների հերթական փուլը արշաւախմբի ղեկավարը գնահատում է արդիւնաւէտ:

«Ուզում եմ շեշտել, որ Տիգրանակերտը շատ հարուստ քաղաք է: Մեր պեղումները հերթական անգամ փաստեցին, որ այն մշակութային ու առեւտրական խոշոր կենտրոն է եղել: Պեղումների օգնութեամբ մենք բացայայտում ենք անցեալի մի դրախտային երկրամաս»,- ասել է նա:

Վերջին պեղումների ընթացքում բացայայտուել է անտիկ թաղամաս, որտեղ մշակութային շերտի խորութիւնը հասնում է մինչեւ 2 մեթրի: Հնագէտի խօսքով՝ այս տարածքում յայտնաբերուած գտածոները չեն տարբերւում Արտաշատի լաւագոյն նմուշներից: Ամենաէական գիւտը 10-11-րդ դարի խաչքարն է, որը ոչ միայն հաւաստում է հայ ինքնութեան ակնյայտ առկայութիւնը Տիգրանակերտում, այլեւ փաստում, որ կենտրոնական թաղամասի բազիլիկ եկեղեցու մի հատուածը 9-րդ դարի համեմատական անկումից յետոյ վերականգնուել է ու ծառայել որպէս մատուռ, որից արեւմուտք էլ կանգնեցուել է խաչքար: Վերջին պեղումների ընթացքում յայտնաբերուել է աւելի քան կէս տոննա տարողութեամբ օձագարդ կարաս, որը վերականգնելուց յետոյ կը դառնայ նորաստեղծ թանգարանի ամենաուշագրաւ ցուցանմուշներից մէկը: Յայտնաբերուել եւ առաջին պեղումներն են իրականցուել Տիգրանակերտի անտիկ դամբարանադաշտերից մէկում: Պեղուել են երկու կարասային թաղումներ, յայտնաբերուել են երկու պղնձէ դրամներ՝ ի դէպ բաւականին ուշագրաւ տեղում:

«Դրամներից մէկը հենց հանգուցեալի բերանի վրայ էր դրուած, որից էլ ատամները կանաչել էին: Հնում տարածուած սովորութիւն կար, մահուան գետն անցնելու համար նաւավարին պէտք էր վճարել եւ հանգուցեալների հետ դրամներ էին դնում»:



Տիգրանակերտը դառնում է Լեռնային Ղարաբաղի զբօսաշրջութեան կարեւոր կենտրոններից մէկը, Համլետ Պետրոսեանի բնորոշմամբ՝ ուխտատեղի, ինչը յուշարձանի պահպանութեան եւ օգտագործման տեսանկիւնից բաւականին լուրջ խնդիրներ է ստեղծում:

«Ինչպէս հայկական իւրաքանչիւր յուշարձանում այնպէս էլ Տիգրանակերտում առկայ են ուխտագնացութեան դրական ու բացասական հետեւանքները: Մարդիկ անընդհատ փորձում են իրենց հետքը թողնել, ինչ որ բան տանել հետները՝ որպէս յուշ, իսկ այդ ինչ որ բանը կարող է լինել կարեւոր գտածոյ: Տիգրանակերտի պահպանութեան խնդիրը կանոնակարգուած չէ, որը լուրջ դժուարութիւններ է ստեղծում»:

Տիգրանակերտում յայտնաբերուած հնագիտական նիւթն առայժմ ներկայացւում է յուշարձանի տարածքում գործող թանգարանում, սակայն ողջ նիւթը, որը տասնեակ անգամներ աւելին է, քան հնարաւոր է ներկայացնել թանգարանում, ի վերջոյ կը հանգրուանի ու կը ցուցադրուի Ստեփանակերտում ստեղծուող յատուկ պահոցում:

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ ՆՈՅՆԻՍԿ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐԱՊԷՍ ՉԻ ԲԱՑՈՒԻՐ»

Շարունակուածէջ 1-էն

ռակ պարզային Հայաստանի մէջ կայանալիք ՆԱԹՕ-ի զօրավարժութիւնները կրնան ձախողիլ:

Անգարայէն հնչող այս յայտարարութիւններուն յաջորդեց Պաքուի կտրուկ արձագանքը: Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի արտաքին յարաբերութիւններու բաժինի ղեկավար Նովրուզ Մամեդով յայտարարեց. - «Հայաստանի հետ սահմանի բացումը նոյնիսկ մէկ ժամով, ինչ ձեւով ալ կատարուի, կրնայ խիստ բացասաբար անդրադառնալ թուրք - ատրպէյճանական յարաբերութիւններու վրայ: Այսօր արեւմտեան որոշ պետութիւններ կ'օգտուին այս յարմար առիթէն, որպէսզի ստիպեն Թուրքիային՝ բանալու սահմանը: Յոյս ունինք, որ Թուրքիան յաջողութեամբ կը դիմագրէ այս փորձութեան»:

## ԱՐԵՒԵԼԱԳԷՏ ԴԱՒԻԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

# «ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԽԸ ՓՈԽՈՒԵԼ Է»



Մէկ տարի առաջ՝ Օգոստոսի 31-ի լոյս Սեպտեմբերի 1-ի գիշերը հայ հասարակութեանը մատուցուեցին հայ-թուրքական արձանագրութիւնները, որոնք այդպէս էլ չվաւերացուեցին Հայաստանի եւ Թուրքիայի խորհրդարաններում՝ թուրքական կողմի պատճառով:

Ի՞նչ դեր ու նշանակութիւն ունեցան արձանագրութիւնները ՀՀ-ի թ՛է արտաքին եւ թէ ներքին կեանքում, եւ մի շարք այլ հարցերի շուրջ »Ա1+«-ը զրուցեց արեւելագէտ, դիւանագէտ Դաւիթ Յովհաննիսեանի հետ:

*-Հայ-Թուրքական արձանագրութիւնները փաստօրէն առաջին լուրջ փաստաթուղթն է, որը Հայաստանի անկախացումից յետոյ ստորագրուել է Թուրքիայի հետ: Փաստաթղթի վիճայարոյց կէտերը ես էլ եմ քննադատել, սակայն փաստաթուղթը Հայաստանի եւ Թուրքիայի խորհրդարաններ մտնելուց յետոյ այդ կէտերն արդէն ակտուալ չեն, քանի, որ մէկ հարց կայ՝ այն վաւերացուելո՞ւ է, թէ՞ ոչ: Բոլորին է յայտնի, թէ Թուրքիան ինչ նախապայմաններ առաջ քաշեց, որոնք փաստաթղթում չկան: Իմ տեսանկիւնից Թուրքիան շատ լուրջ դիւանագիտական խաղ սկսեց մի շարք ուղղութիւններով՝ իր ազգային շահերը ապահովելու համար. առաջին հերթին ԱՄՆ-ի, առանձին-առանձին եւրոպական մի շարք երկրների հետ, ՌԴ-ի հետ:*

-Ձեր կարծիքով դա Թուրքիային յաջողուե՞ց:

*-Կարծում եմ՝ քիչ չափերով: Թուրքիային յաջողուեց մէկ ուրիշ բան. այս ամբողջ խաղի ընթացքում մի կողմից Թուրքիայի եւ ՌԴ-ի, միւս կողմից ՌԴ-ի եւ Իրանի միջեւ անընդհատ բանակցութիւններ են գնացել: Հաստատող փաստերը քիչ են, բայց, իմ կարծիքով, այդ խաղի նպատակը տարածաշրջանի խաղացողներին եւ առաջին հերթին ԱՄՆ-ին դուրս մղելն էր տարածաշրջանային քաղաքական դաշտից: Այն պայմանագրերը, որոնք մենք տեսանք, արդէն ստորագրուած հայ-ռուսական եւ նախապատրաստուող Թուրք-ադրբեջանական այդ ծրագրի իրականացումն է: Կարծում եմ՛ Թուրքիան եւ ՌԴ-ն իրենց ուզածին հասան, սակայն դա կարճ կը տեւի, որովհետեւ Թուրքիան եւ ՌԴ-ն գերագնահատում են այն խնդիրները, մասնաւորապէս տնտեսական, որոնց առաջ այսօր կանգնած է Սպիտակ տունը:*

-Իսկ ի՞նչ ազդեցութիւն ունեցան հայ-թուրքական արձանագրութիւնները ՀՀ-ի ներքին եւ արտաքին կեանքում: Համամի՞տ էք այն տեսակէտի հետ, որ հենց արձանագրութիւնները պատճառ դարձան, որ իշխանական կոալիցիան պառակտուի: ՀՅԴ-ն արձանագրութիւններով հիմնաւորեց կոալիցիայից դուրս գալը:

*- Ես չեմ կարծում, որ արձանագրութիւնները դարձան կոալիցիայի պառակտման պատճառը, այնտեղ հակասութիւնները մինչ այդ արդէն շատ մեծ էին: Ի վերջոյ, ՀՀԿ-ին կամ Սերժ Սարգսեանի կողմնակից ուժերին ՀՅԴ-ն առանձնապէս պէտք չէ, որովհետեւ ՀՅԴ-ն ՀՀ-ում գրեթէ ազդեցութիւն չունի, իսկ այն արտաքին ազդեցութիւնը, որն ունէր սփիւռքում ՀՅԴ-ն, աստիճանաբար նուազում է: Այսինքն, կոալիցիայի քայքայումը բնական պրոցէս էր: Ինչ վերաբերում արձանագրութիւնների ազդեցութեանը ներքաղաքական կեանքում, ապա այն Սերժ Սարգսեանի քաղաքականութեան հիմնական մեխն էր: Կորցնելով սա՝ արտաքին քաղաքական ոլորտի հիմնական խորութիւնը ձախողուեց, սակայն չեմ կարծում, որ այդ ձախողումը բերեց լուրջ հետեւանքների, որովհետեւ դրա փոխարէն կնքուեց հայ-ռուսական պայմանագիրը եւ ԼՂ-ի բանակցային պրոցէսը, որի արդիւնքում ՀՀ-ի իշխանութիւններին լուրջ ճնշումների էին ենթարկում մտաւ իր նախկին՝ լճացման փուլ:*

- Այսինքն, Սերժ Սարգսեանի քաղաքական մեխը փոխուե՞լ է, այլեւս հայ-թուրքական արձանագրութիւնները չեն:

*-Այո, փոխուել է:*

-Մէկ տարի շարունակ իշխանութիւնները անընդհատ խօսում էին հայ-թուրքական արձանագրութիւնների մասին, գործընթացը սառեցուելուց յետոյ ի՞նչի մասին խօսելու:

*- Ես արդէն ասել եմ, որ հայ-թուրքական արձանագրութիւններով իշխանութիւնները շեղում էին հասարակութեան ուշադրութիւնը մեր տնտեսութեան ողբալի վիճակից, Մարտի 1-ից, մի շարք այլ յանցագործութիւնները չբացայայտուած լինելուց: Վերջին մէկ տարին ինձ մի անեկդոտ է յիշեցնում, երբ Լենինի 100-ամեակն էին տօնում, արդուկն էլ միացնում էին, այդ էլ խօսում Լենինից: Հիմա մեզ մօտ հայ-թուրքական արձանագրութիւններից են խօսում բոլորը, սակայն ոեւէ մէկը չի խօսում մեր ապագայից: Այսուհետ Սերժ Սարգսեանի քաղաքական մեխը հայ-ռուսական յարաբերութիւններն են: Սա շատ կարեւոր հարց է: Եթէ ես հնարաւորութիւն ունենայի խորհուրդ կը տայի, թէ ինչպէս վարել այդ բանակցութիւնները՝ աւելի յաջող պայմաններ ստանալու եւ աւելի քիչ նուաստացուցիչ վիճակում յայտնուելու համար:*

-Ի՞նչ խորհուրդ կը տայիք ՀՀ իշխանութիւններին:

*-Ջեմ կասկածում, որ ԱԳՆ-ում եւ ԱԳՆ-ից դուրս իմ նախկին կոլեգիաներից մի քանիսն էլ շատ լաւ գիտեն, թէ ինչպէս պէտք բանակցել, սակայն նրանց էլ չեն հարցնում:*

-Ձեր կարծիքով մեր իշխանութիւնները բանակցութիւններում զգո՞ւմ են, որ նուաստացուցիչ վիճակում են:

*-Կարծում եմ՝ ոչ:*

-Ի՞նչ զարգացում կարող է ունենալ հայ-թուրքական արձանագրութիւնները կեանքի կոչելու գործընթացը: Սառեցուած էլ կը մնա՞յ:

*-Այսօր քննարկուող հարցերից մէկն այն է, թէ ՆԱՏՕ-ի զօրավարժութիւնների առիթով Թուրքիան ժամանակաւորապէս կը բացի՞ հայ-Թուրքական սահմանը, թէ՞ ոչ: Դա կախուած է նրանից, թէ Թուրքիայի իշխանութիւնները որքան կը կարողանան պահպանել իրենց ազդեցութիւնը երկրում: Ինչպէս գիտէք, Թուրքիայում հանրաքուէ եւ խորհրդարանի ընտրութիւններ են սպասւում: Այսօր Թուրքիայում լուրջ փոփոխութիւններ են ընթանում հենց իշխանութեան կազմում՝ պատասխանատուութիւնը կիսելու համար: Վերջին շրջանում ես բազմաթիւ տարածաշրջանային հանդիպումների եմ մասնակցել, որտեղ կարծում էին, որ մինչեւ Թուրքիայում չաւարտուեն խորհրդարանի ընտրութիւնները հայ-Թուրքական յարաբերութիւններում որեւէ լուրջ տեղաշարժ չի լինի:*

-Իսկ Դուք ի՞նչ էք կարծում:

*-Ես էլ եմ այդպէս կարծում:*

-Իսկ ներքին սպառման համար Թուրքիայում եւ ՀՀ-ում կը շարունակեն օգտագործել հայ-թուրքական արձանագրութիւնները:

*-Իհարկէ, կ՛օգտագործուեն: Թուրքիայում խորհրդարանի ընտրութիւններից առաջ ասում են, որ հայ-Թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացն օգտագործում են մի շարք խնդիրներ լուծելու համար, յատկապէս եղբայր պետութեան Ադրբեջանին ԼՂ հարցում օգնելու համար:*

-Մեր իշխանութիւններն անընդհատ ասում են, որ ընդդիմութիւնն է շահարկում հայ-թուրքական յարաբերութիւնները, ԼՂ հիմնախնդիրը:

*-Քաղաքականութեան մէջ «շահարկում» բառը կարելի է օգտագործուել միայն ծայրայեղ դէպքերում: Մարդիկ ընդդիմութիւն են, որովհետեւ երկրի համար կարեւորագոյն հարցերում ունեն ընդդիմադիր կարծիք: Ընդհանրապէս մեր երկրի քաղաքականութիւնը սահմանափակուած է ԼՂ հիմնախնդրով, սառեցուած հայ-Թուրքական յարաբերութիւններով, ՌԴ-ի հետ եղբայրութիւն եւ ՆԱՏՕ-ի հետ յարաբերութիւնների զարգացման փորձերով: Մենք գրեթէ գոյութիւն չունենք Միջին Ասիայում, Միջին Արեւելքում մենք կորցրել ենք բոլոր այն դիրքերը, որոնք ունէինք: ՀՀ-ի իշխանութիւններն, արտաքին յարաբերութիւններում հնարաւորութիւն ունենալով տարբեր ձեւաչափերով դիւանագիտական գործունէութիւն իրականացնելու հնարաւորութիւն, դա չեն անում: Այս ամէնը մեր արտաքին քաղաքականութեան հիմնական թերութիւնն է:*

-Իսկ շարքային քաղաքացիներին ի՞նչ տուեցին վերջին մէկ տարուայ ընթացքում հայ-թուրքական արձանագրութիւնների քննարկումները, մեր ժողովուրդը թէկուզ հոգեբանօրէն փոփոխութեան ենթարկուե՞ց:

*-Ոչինչ չտուեց: Թուրքիան պէտք է ճանաչի 1915թ. Հայոց ցեղասպանութիւնը, որպէսզի ՀՀ շարքային քաղաքացին այլեւս վտանգ չսպասի Թուրքիայից:*

*Հարցազրոյցը վարեց՝*
*ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**



## ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՌՈՒՑԵՑԻՆՔ
## ՄԻԱՍՆԱԲԱՐ ՊԻՏԻ ՏՕՆԱԽՄԲԵՆՔ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ

ԵՒ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ Կ'ՈՂՋՈՒՆԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Դ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՒ

# ՊԱՏՄԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՏԱՃԱՐԻ

18

## ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
Շաբաթ, Սեպտեմբեր 11, 2010, կ.ե. ժամը 3:00-ին

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ
Կիրակի, Սեպտեմբեր 12, 2010, կ.ա. ժամը 10:00-ին

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱԼԱ ՃԱՇԿԵՐՈՅԹ
Կիրակի, Սեպտեմբեր 12, 2010, երեկոյեան ժամը 5:00-ին
Universal Hilton Hotel
(Տոմսերու համար դիմել 818-558-7474 կամ 818-613-8514)

Մանրամասնութեանց համար դիմել Առաջնորդարան՝ (818) 558-7474
www.armenianchurchwd.com



## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆԸ ԻՐ ԴՌՆԵՐԸ ԿԸ ԲԱՆԱՅ



*Ուրախութեամբ կ՚ուզենք յայտարարել թէ Սեպտեմբեր 12, 2010 Կիրակի կէսօրէ յետոյ, Բարձր Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայութեամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, ինչպէս նաեւ համայն աշխարհի Թեմակալ Առաջնորդներեւ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Հոգեւորականաց Դասուն եւ Պոլսահայ Միութեան Վարչական անդամներու մասնակցութեամբ, նորակառայց շէնքը պաշտօնապէս իր դռները պիտի բանայ հանրութեան դիմաց, իբրեւ Հայկական Մշակութային եւ Ընկերային Կեդրոն:*

*Բ. գիրքի աշխատասիրութեան համար դասաւորումի սկզբունքը պէտք չէ անտեսէ օտարագիր հայ գրողները՝ ինչպէս Ա. գիրքին մէջ նկատի առնուած են Փիթըր Պալաքեան, Վիքթոր Կարտօն, Յակոբ Խաչիկեան, Տանիէլ Սուսին «Ամառ Առանց Այգեբացի», օտարազգի հեղինակները եւ Թուրք այլախոհները առանձին գլուխներով ներկայացնելը՝ պատկերացումը տարբեր անկիւններէ աւելի ամբողջական դարձնելու եւ տեսնելու նպատակով:*



*Բայց ինչ կը վերաբերի առաջին գիրքով իրագործուածին եւ խմբագիրին՝ Գէորգ Եազճեանին ծանօթագրական նշումներով կատարած յաւելումներուն «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» գիրք Ա.-ը մեծապէս գնահատելի է եւ օգտագործելի՝ ցեղասպանութիւնը ուսումնասիրողներու համար:*

*Գոհունակութիւն է հաստատել, որ ցեղասպանութենէն 95 տարիներ ետք, նոր սերունդի ներկայացուցիչներ ոչ միայն չեն մոռանար գրագէտ Աւետիս Ահարոնեանի բառերով՝ «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարդայ նախատինք», այլեւ՝ հանդէս կու գան ցեղասպանութեան նուիրուած աշխատասիրութիւններով:*

*Յարութիւն Իսկահատեան հայկական կազմաւորումով այդ սերունդի հաւատաւոր ներկայացուցիչներէն է. խօսքէն աւելի կը հաւատայ բեղմնաւոր եւ լուռ աշխատանքին:*

# «ՎԿԱՅԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ» ՀԱՏՈՐԷՆ ՆՄՈՅՇ ՄԸ

*Peter Balakian, «Black Dog Of Fate», «Broadway Books», New York, 1997, Միջակ չափի 289 էջ, (Փիթըր Պալաքեան, «Ճակատագրի Սեւ Շունը», անգլերէն):*

*Հեղինակը ծնած է ԱՄՆ, 1951-ին: 1960-ական թուականներուն սկիզբը ան յարատեւ շփման մէջ էր մօրական մեծ մօրը՝ Տիգրանակերտ մեծցած Նաֆինայի հետ, որու միջոցաւ ան տեղեակ կ'ըլլայ հայ ազգի Մեծ Եղեռնին եւ ցաւերուն: Կը յիշէ իր մանկութեան լսած «հին երկիրի»՝ Հայաստանի մասին:*

*Հեղինակին մօտ կար հայրենիքի ոչ մէկ շօշափելի գոյութիւն, ոչ մէկ պատկեր. իր երեւակայութեան մէջ միայն Նաֆինան էր, որ կը մարմնացնէր Հայաստանը:*

*Նաֆինան ծնած էր 1890-ին եւ մահացած էր 1964-ին: Անոր մահէն ետք, Փիթըր յաճախ կը յիշէ զայն եւ անոր խօսքերը: Ան կը յիշէ մանաւանդ իր մեծ մօր խօսքը, երբ ան բարի եւ չար ոգիներու մասին խօսած ատեն, չար ոգիներու իբր հոմանիշ կը գործածէ «Թուրքեր» եւ «ոճրագործներ» բառերը: Հեղինակը իր պատանութեան շրջանին յաճախ կը յիշէ Հայաստանի մասին Նաֆինայի պատումները, տեղանուններով հանդերձ, որոնք իր մտքին մէջ կը տպաւորուէին:*

*Հեղինակի՝ պատանութեան շրջանի յուշերէն են իր մօր հետ ունեցած խօսակցութիւնները, որոնք յաճախ կ'ըլլային Հայաստանի եւ Արարատ լերան մասին:*

*Փիթըրի հայրը Պոլիս ծնած էր: Պատանութեան իր յուշերը հօրը հետ՝ Պոլսոյ շուրջը կը դառնային: Նիւ Եորքի հայկական ճաշարաններու անուններէն ոմանք այդ շրջանի անուններ կը կրէին:*

*Հեղինակը դպրոցական շրջանին կը մտադրէ ուսումնասիրութիւն մը պատրաստել Հայաստանի մասին: Գրադարանին մէջ աղբիւրներուն մեծ մասը Թուրքիոյ կը վերաբերէր: Ան զարմանքով կը նկատէ, թէ այս աղբիւրները պատմական Հայաստանի մասին ո՛չ մէկ յիշատակութիւն ունէին:*

*Աւելի ուշ, երբ ան երիտասարդութեան սեմին կը գտնուի, հայրը գինք Հայաստանի եւ հայ ժողովուրդին մասին գիրքեր կարդալու կը մղէ: Փիթըր կը կարդայ դեսպան Մորկընթաուի յուշերը: Հեղինակը իր նիւթերը քաղելով հաւաստի աղբիւրներէ եւ լսելով ականատեսներէ, կը նկարագրէ Հայոց Եղեռնը եւ անոր հետ առնչութիւն ունեցող իրադարձութիւնները: Ան բաղդատականը կ'ընէ հայ ազգի չարչարանքներուն եւ հրեա-*

*Շար.ը էջ 19*



Telethon

ԿԻՐԱԿԻ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010

11-րդ տարեկան Telethon «Քաջ Նազար»ի գլխաւորութեամբ:
Նուիրուած «Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների Սբ. Ծնունդի և դպրոցաշինական ֆոնտին» 380 AMGA կայանով՝
818-239-6880, 818-606-2070, 818-246-0125
www.fourourkids99@gmail.com. ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԶԽԱԶԱՔԵԻԵԼ:

## «ՊԱՆԴՈՒԽՏ»Ի ԼՈՍԱՆՃԵԼՈՍԵԱՆ ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐԻՑ

*«Մասիս»ի ընթերցասէր Հայրենակիցներից է, յուշագիրը խմբագրութիւն յանձնող, Լոսանճելոսաբնակ «Պանդուխտ»ը նա այդպէս է անուանում իրեն իր թղթակցութիւններում:*

*Մեր էշը:*

*Տպաւորիչ էր Սարգիսի մօր թաղման ժամանակ «Կլենտէլի Ս. Գէորգ եկեղեցու բակում Գառնիկի զրոյցը; Պատմում էր ընկերոջ մասին:*

*Նա խնդրում է Գառնիկին որը պատրաստւում էր շրջագայութեան համար Հայաստան մեկնել: 400 տոլլար հասցնի իր հարազատ եղբօրը, որ ապրում էր Էջմիածին քաղաքում: Գումարը ուղարկողը Գառնիկի վաղեմի ընկերներից էր, որը ինչպէս շատերը, չարքաշ շինարարական աշխատանքով իր կենսական խնդիրներն էր լուծում;*

*Հայաստանում նա Էջմիածնի Մայրավանք այցելելուց յետոյ, որոշում է հանդիպել ընկերոջ եղբօրը եւ գումարը յանձնելուց յետոյ վերադառնալ Երեւան:*

*Գառնիկին ուղեկցող Երեւանցի վարորդը թաղամասը հեշտութեամբ գտնում է, որից յետոյ մայթին կանգնած տղաներից հարցնում է գումարի հասցէատիրոջ շէնքը:*

*Տղաներից մէկը մատնացոյց է անում մի անձնաւորութեանը, որը բակի բնակիչների համար որպէս հաւաքատեղի կառուցուած տանիքի տակ նարդի էր գլորում:*

*Մօտենալուն պէս, Հաւաքուածները նկատում են նրան, բարիգալուստ են մաղթում, – Ամերիկայի կեանքից են հարցեր տալիս: Նա էլ քաղաքավարութեան սահմաններում փորձում է կարճ, բայց բաւարարող պատասխաններ տալ:*

*Գումարի հասցէատէրը, այսինքն Գառնիկի ընկերոջ եղբայրը, անտարբերութեամբ նարդի է գլորում:*

*Քիչ անց նարդու շարիկները տեղաւորելուց յետոյ թեքուելով դէպի Գառնիկը, եւ բնականաբար իմանալով որ եղբօրը գիտի՝ հարցնում է թէ,*

*-Մեր էշը ինչ է անում: Իսկ մեր «փոստատար» ընկերը, ձեռքը գրպանում փողը ճմրթելով, ներքին ալեկոծումներից ու վիրաւորանքից դրդուած, որոշում է գումարը չտալ, թէկուզ կարիքի մէջ էլ որ լինի այդ «եղբայրը»:*

*«Միգուցէ ուշացրել է, կամ ինչ որ այլ պատճառներ կան, չգիտեմ, բայց ինչ էլ որ լինէր իմ ներկայութեամբ իրաւունքը չունէր արտայայտուելու նման ձեւով, մտածելով հեռանում է, բոլորին մնաք բարով ասելով:*

*Միացեալ Նահանգներ վերադառնալուց յետոյ, նշուած գումարը վերադարձնում է ընկերոջը, ասելով*

*- Կը ներես, որ եղբօրդ չտեսայ: Երեւի ճիշտ կը լինէր ասէի եղբայր չտեսայ այնտեղ:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**

**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**

**(626) 797-7680**



**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506


## ԳԻՐՔ-ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՅՏԱ ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆԻ «ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԵՐԸ» ԽՈՐԱԳՐԵԱԼ ԳԻՐՔԻՆ ՄԱՍԻՆ

***ՀԱՑԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ***

*Պէյրութ, 2009 թուականին հրատարակուած է «Լիբանանի հայերը, անցեալի իշխանուհիներ ու գաղթականներ եւ ժամանակակից համայնք» խորագրեալ եռալեզու հատորը, անգլերէն, ֆրանսերէն եւ հայերէն բաժիններով, մասնակցութեամբը աւելի քան տասնեակ մը աշխատակիցներու՝ խմբագրական տնօրինութեամբ Այտա Պուճիգանեանի: Ինչպէս խորագիրը ցոյց կու տայ, այս հատորին հեղինակները կը յաւակնին լիբանանահայ գաղութին կազմութեան, ազգային կառոյցներու կազմաւորման եւ համասփիւռքեան կեանքին իր ունեցած մասնակցութեան պատմութիւնը տալ: Գաղութի մը պատմութիւնը տալը կ՛ենթադրէ պատմական ճշգրիտ ծանօթութիւն, համապարփակ ակնարկ եւ անսպառ դատողութիւն ունենալ: Օրինակ, երբ կրթական կեանքի կազմաւորման մասին կը խօսուի, կարելի չէ զանց առնել Լիբանանի առաջին հայ դպրոցին՝ Նուպարեան վարժարանին 1924ին Թիրօ թաղին մէջ հիմնումը, որ ներկայիս Ս. Վարդան կը կոչուի: Թէ ինչո՞ւ Նուպարեան անուանուած էր՝ այն պատճառով որ Հ.Բ.Ը. Միութեան այդ ժամանակուան նախագահ Նուպար փաշայի նուիրատուութեամբ կառուցուած էր փայտաշէն, թիթեղածածկ եւ չարժական այդ կառոյցը, որ տեղէ տեղ փոխադրուած է ըստ հողատիրոջ պարտադրանքին:*

*Նուպարեան վարժարանին տուած սերունդներէն կան տակաւին վերապրողներ, ինչպէս ստորագրեալս, որ ի միջի այլոց, այդ մասին գրած է «Լիբանանի Առաջին Հայ Դպրոցը» խորագրով:*

*Պուճիգանեանի այս գրքին արուեստի բաժնին մէջ մեծ իրագործումներ եւ դերակատարներ արժանի կարեւորութեամբ չեն ներկայացուած: Օրինակ, Հ.Բ.Ը. Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Երգի-Պարի Անսամպ-*

*Շար.ը էջ 17*




Annual Homenmen Camping

Հ.Մ.Ը.Մ. HOMENMEN 1921






**THREE DAYS** FRIDAY THRU SUNDAY

**SEPT 17 • 18 • 19**

43830 Cottonwood Rd., Newberry Springs, CA 92365

***ALL*** MEALS, WATER AND SODA ***INCLUDED***

*Alcoholic Beverages Also Available*

LIMITED TENT RENTAL: $10.00 PER DAY



Activities:
- Volleyball
- Basketball
- Football
- Swimming
- Trap Shooting
- Off-Roading (bring your own vehicle)
- Horseback Riding
- Poker Tournament
- Blot Tournament

... And Many More

We appreciate your support!

*RESERVATIONS MUST BE MADE BY:* **September 13, 2010**

- **Number of Persons Attending**
  - ______ @ $85.00 per person (3 Days)
  - ______ @ $60.00 per child under 12 (3 Days)
  - ______ @ $65.00 per person (2 Days)
  - ______ @ $40.00 per child under 12 (2 Days)
- **Number of Tent Rentals (Sleeps 4 • Limited Availability)**
  - ______ @ $30.00 (3 Days) ______ @ $20.00 (2 Days)

**Enclosed is my check total for: $**______

❑ I am unable to attend. **Enclosed is my donation of: $**______

❑ **3 DAYS** FRIDAY, SATURDAY, SUNDAY

❑ **2 DAYS** SATURDAY, SUNDAY

Name(s) ______

Phone ______

*FOR MORE INFORMATION CALL:*

**LENA (626) 398-0506 • KNAR B. (626) 497-5111**

**LENA D. (626) 485-6434**


END OF SUMMER PRICE PLUNGE
GNARLY HEAD
Old Vine Zinfandel
5.99 NO LIMIT
PATRON
Reposado Tequila 750ml
29.99 LIMIT 6
ROMANCE
Vodka 750ml
7.99 LIMIT 6
TECATE
12 Pack Cans
5.99 LIMIT 2
LABOR DAY WEEKEND SALE
FRIDAY, SEPT. 3 - SATURDAY, SEPT. 4
ABSOLUT 100
Vodka 1.0L
10.99 LIMIT 6
HEINEKEN
24 Pack 12 Oz. Bottles
19.99 LIMIT 2
MGD, MILLER LITE,
COORS OR COORS LIGHT
18 Pack 12 Oz. Cans
9.99 NO LIMIT
X-RATED
Vodka 1.75L
19.99 LIMIT 6
GREY GOOSE VODKA
ALL FLAVORS
21.99
ESPOLON TEQUILA
SILVER OR REPOSADO
19.99
JACK DANIELS
OLD NO. 7 WHISKEY
13.99
PATRON
SILVER TEQUILA
29.99
CHIVAS REGAL
12 YEARS SCOTCH WHISKY
16.99
DEWAR'S
12 YEARS SCOTCH WHISKY
14.99
HENNESSY
VS COGNAC
21.99
JOSE CUERVO
ESPECIAL TEQUILA
9.99
CAZADORES
REPOSADO TEQUILA
19.99
COURVOISIER
VS COGNAC
16.99
JOHNNIE WALKER
BLACK LABEL
19.99
RUSSIAN STANDARD
PLATINUM VODKA
18.99
Washington Blvd.
Hill Ave.
Allen Ave.
N
210 FWY
1785 E. Washington Blvd.
(corner of Allen)
Pasadena, CA 91104
(626) 794-7026
MISSION
Wine & Spirits
825 W. Glenoaks Blvd.
(corner of Highland)
Glendale, CA 91202
(818) 242-0683
Highland
N. Pacific Ave
Glenoaks
N
134 FWY
Hours: Mon. - Sat., 9am - 8pm
Closed Sunday
Hours: Mon. - Sat., 9am - 8pm
Closed Sunday
Southern California's Premier Wine & Spirits Superstore!
*This ad expires on 09/29/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

# ՃՇԴՈՒՄ, ՅԵՐՔՈՒՄ...

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

«Ասպարէզ» օրաթերթի 2010 թուականի, Յուլիսի 15ի, թիւ 13812-ում, «Մասիս» շաբաթաթերթի 2010 թուականի Յուլիս 24ի թիւ 27-ում եւ «Նոր Օր» շաբաթաթերթի 2010 թուականի Յուլիս 23ի թիւ 30-ում հրապարակուած ներքոյիշեալ լրատուական տեղեկութեան առիթով «Անտիոքի Հայկական Վեց Եկեղեցիներու Համալիրին Վրայ Մզկիթ Կառուցուած է» թրքական «Սապահ» (Առաւօտ) լրագրի համաձայն, Անտիոքի շրջանի «Սամանտաղ» կոչուած շրջանին կից, Եօղուն Օլուգ գիւղում կայ վեց եկեղեցիներէ բաղկացած համալիր, վրան մզկիթ կառուցուած:

Մուսա Լերան վեց գիւղերը, մինչեւ 1919 թուականը, ընդգրկուած էին «Սուէտիա» շրջանին մէջ, որի պատճառով Մուսա Լեռցիները կոչուել էին նաեւ սուէտիացի: Սուրիան Ֆրանսական խնամակալութեան յանձնելուց յետոյ, Մուսա Լերան ութսուն քառակուսի մղոն տարածութիւնը առանձնացուել է Սուէտիայի շրջանից եւ կոչուել՝ «Մուսա Լերան Շրջան»:

Նախկին «Սուէտիա» եւ Մուսա Լեռ շրջանների անունը փոխուած է «Սաման Տաղ» անուան, մոռացութեան տալու համար Սելեւկիա-Սուէտիա եւ Մուսա Լեռը: Նոյն մտահոգութեամբ այլափոխուած, այլնադակուած են Հայկական Լեռնաշխարհի լեռների, չէների անուշ անունները: Անտիոքից դէպի Սուէտիա-Լէչլիէ ճանապարհին է գտնւում Սիմոն Սիւնակեցիի աւերակ վանքը եւ նոյն անուն սարը: Փոխանակ տեղական արաբերէնով հնչուած Սըմաան-Տաղ անուանէին գաւառակը, ներառեալ նաեւ Մուսա Լեռը, այն նենգաբար ձեւափոխել ու կոչել են Սաման-Տաղ, այսինքն յարդի լեռ, հողմահարուած լեռ:

Անտիոք, հիմնադրուած մեր թուարկութիւնից առաջ 301 թուականին, Մեծն Աղեքսանդրի զօրավար, Ասորիքի Սելեւկեան պետութեան հիմնադիր՝ Սելեւկիոս Նիկատոր (Յաղթող) թագաւորի կողմից: Իր հօր անունով, Սելեւկիոսը այն անուանել է Անտիոք: Նրա կառուցմանը մասնակցել էին նաեւ Հայկական Լեռնաշխարհի Արմէնհայերը: Յետագայում, այնտեղ եկել ու մշտական բնակութիւն են հաստատել բազմախումբ Արմէն-հայեր, իրենց հետ բերելով հայոց լեռնաշխարհի իմաստութիւնը: Անտիոքը, բարձր պարիսպներով, հզօր միջնաբերդով, գողտրիկ ղեակներով, արհեստների, գիտութիւնների, առեւտրի բարգաւաճ քաղաք էր: Պատմաբաններ, Անտիոքը անուանել են արեւելքի Հռոմ, Աթէնք: Արմինա հայկական լեռնաշխարհի նոր աշխարհակալութիւն, Արքաների Արքայ Տիգրանի քաջերը իրենց երկրի սահմանները տարան այնտեղ, որտեղ իրենց զէնքերը կը հասնէին: Հասան ծովեր, տաք ջրերի ծովերի ափեր եւ մ.թ.ա. ութսուն չորս թուականին հայոց զօրական գունդերը, այրուձիի վաշտերը մտան Անտիոք, որ աւելի քան քսան տարիներ եղաւ հայոց Արքայի եւս մի աթոռանիստ քաղաքը:

Հեռու արեւելքի տափաստաններից եկած խորշակը, այրեց իր ճանապարհը, հասաւ նաեւ Անտիոք: Նրա տաճարները, եկեղեցիները եղան մզկիթներ, նրանց վրայ մինարէներ բարձրացան:

Թրքական մամուլը, շատ յաճախ հանրութեան մատուցում է խեղաթիւրուած լրատուութիւն, անցեալի պատմութեան կեղծուած, այլափոխուած մեկնաբանութիւններ: Այդպէս է ներկայացուել նաեւ Մուսա Լերան Եօղուն Օլուգ գիւղի եկեղեցու մասին հաղորդումը:

Տողերիս հեղինակը, Մուսա Լերան Եօղուն Օլուգ գիւղի Լագիսեան եւ Հապէշեան գերդաստաններ ի զաւակն է, ծնուած նոյն գիւղում 1925 թուականին: 1938 թուականին ուսումնառութեան է մեկնել Կիպրոս կղզու Մելգոնեան Կրթական Հաստատութիւն:

Պատանի տարիքի շատ լուսաւոր, ծիածանափայլ յիշողութիւններ ունեմ մասնաւորապէս Եօղուն Օլուգի եւ մասամբ նաեւ միւս գիւղերի մասին: Եօղուն Օլուգը, որպէս հայոց հին աստուածների մեհեան բազմած է իմ հոգում եւ ամէն օր երեւակայութեանս լուսոտ ճառագայթներին յենած գնում նրան այցի: Գիտեմ նրա գիւղամիջեան ճանապարհները, նրանց վրայ բազմած տների գերդաստանների մարդկանց: Գիտեմ նրա գիւղամիջեան ճանապարհները, նրանց վրայ բազմած տների գերդաստանների մարդկանց: Գիտեմ սահմանները Լագիսեանների, Հապէշեանների եւ շատ ուրիշներին պատկանող պարտէզների:

Եօղուն Օլուգում վեց եկեղեցիներից բաղկացած համալիր չկար, չկայ: Կանգուն է գիւղի սուրբ Աստուածածին անունով միակ եկեղեցին: Եօղուն Օլուգ գիւղը ոչ թէ Սաման Տաղ շրջանին կից է, այլ նոյն շրջանի կազմի մէջ եւ ոչ Վագըֆլը գիւղի հարեւանութեամբ: Նրանց միջեւ յարատեւում է Խըտըրպէկ գիւղը:

Եօղուն Օլուգի գիւղամիջով գնում է նրա գլխաւոր ճանապարհը, այն հատում է հիւսիսից հարաւ իջնող ուղղահայեաց ճանապարհը: Նրանց հատման անկիւնին է 1790 թուականին կառուցուել եկեղեցին, որ ոչ թէ 350 տարեկան է, այլ 220: Ըստ պատումների, եկեղեցու ճակատային մասի որմերում օգտագործուել են գիւղին մօտակայ Թովմաս Առաքեալ փլատակ վանքի քանդակազարդ քարեր, որոնք ունեն Վանա ծովի Աղթամար կղզու Սուրբ Խաչ տաճարի քանդակների հօյակերտ տեսքը: Եկեղեցին քարէ հարթ սալերով տանիք ունէր, ճակատային մասի բարձր որմերին քանդակազարդ քարերով գօտի էր կապած, երկարուկ նեղ պատուհաններ, երկու դռներ: Մայր դրան վերին քարի վրայ Հայերէն արձանագրութիւն՝ «Կարողութեամբն Աստուածային, ի ժամանակի Կիրակոս Կաթողիկոս Օծեալ Աջոյն Գաբրիէլ Վարդապետի...»: Եկեղեցու բակը բարձրանում են քարէ բազմաշարք աստիճաններով, որտեղ կային երկու խոշոր դափնի ծառեր՝ երկու մարդու թեւատարած հաստ բներով: Եկեղեցիի ներսը Ս. Երրորդութիւնը խորհրդանշող երեք խորաններ, աջ պատի մէջ պագալտ քարէ մկրտութեան աւազանիկ, ետնամասում վերնատուն:

Ըստ լրագրի, երբ 1915-1920ական թուականներին գիւղէն հայերու հեռանալէն ետք, 1940 թուականին, այնտեղ բնակութիւն հաստատած թուրքերուն կողմէ եկեղեցու վրայ կառուցուել է մզկիթ:

Շար.ը էջ 17

# ՅԱՃԸՆԻ ՅԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Ազգային վեհ գաղափարները միշտ պէտք է վառ պահել ժողովրդի գիտակցութեան մէջ, որպէսզի ապագայում ունենանք ճիշտ ձեւաւորուած ազգային մտածելակերպ, որը կը փոխանցուի սերունդներին եւ կը դառնայ կենսաձեւ:

Հայրենակցական միութիւնները սկսեցին ձեւաւորուել Մեծ եղեռնին յաջորդող տարիներին, երբ ցեղասպանութիւնից մազապուրծ հայերը աշխարհի տարբեր ծայրերում ապաստան գտնելուց յետոյ, սկսեցին փնտռել իրենց հարազատներին ու ազգականներին: Այդ տարիներին տպագիր մամուլում յաճախ կարելի էր հանդիպել «Փնտռւում է...» արտայայտութեանը: Այսպէս սկսուեց ազգականների, հայրենակիցների մէկտեղումը, որի նպատակը միմեանց օգնելն ու նեցուկ լինելն էր: Մէկտեղումը մեր ազգային յիշողութիւնը պահող ազդակներից կարեւորագոյնն է, որովհետեւ յիշողութիւնը կորցնող ժողովուրդը վաղ թէ ուշ դադարում է ազգ լինելուց: Հայրենասիրական, միասնական, միաբան ոգին, նուիրական ու համակարգուած աշխատանքը, ապագայի նկատմամբ լաւատեսութիւնը, չխամրող յոյսն ու հաւատը հայրենակցական միութիւններին առաջնորդող մշտավառ ջահերն են, հայրենակցական գիտակցութեան ոգին մարմնաւորող ուժը:

Այսպէս է ստեղծուել նաեւ «Հաճըն» հայրենակցական միութիւնը: Ստեղծուել է 1910 թուականին՝ Ատանայի ջարդերից անմիջապէս յետոյ, Սիս քաղաքում: Բայց որպէսզի միութիւնը զերծ մնար Թրքական կառավարութեան կողմից որպէս «Քօմիթէճիներ» ամբաստանուելու վտանգից, ընտրուեց «Հաճընցի Աղէտեալներուն Օգնութեան Տիկնանց Միութիւն» անունը՝ նախընտրելով գործն առաջ տանել իրենց տիկնանց անուններով:

Միութիւնը ստանձնել էր դժբախտ հայրենակիցներին հաւաքելու, նրանց կարիքները հոգալու, ապա Հաճըն վերադարձնելու աշխատանքները: Հիմնադրումից ոչ շատ անց՝ 1912-13 թուականներին, «Հաճընցի Աղէտեալներուն Օգնութեան Տիկնանց Միութիւնը» դառնում է Ատանայում ստեղծուած «Հաճըն» հայրենակցական կենտրոնական միութեան մասը: Սկսած 20-րդ դարի 20-ական թուականներից, «Հաճըն» հայրենակցական միութիւններ են հիմնուել Արժէնթինայում, Ֆրանսայում, Ուրուգուայում, Պաղեստինում, Լիբանանում, Սիրիայում, Պրազիլիայում, Յունաստանում եւ այլուր: Աշխարհատարած շուրջ 7065 հաճընցիներից մօտ 2000-ը ապրում են Հարաւային Ամերիկայում եւ այսօր Արժէնթինայի մայրաքաղաք Պուէնոս Այրէսում է «Հաճըն» հայրենակցական միութեան կենտրոնական վարչութիւնը, այստեղ լոյս է տեսնում «Նոր Հաճըն» ամսագիրը:

Կիլիկիոյ Հաճըն քաղաքը Մեծ եղեռնի տարիներին Ֆրանսայի եւ Անգլիայի երկերեսանի քաղաքականութեան զոհը դարձաւ: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թուականին, Անգլիայի եւ Ֆրանսայի պայմանաւորուածութեամբ, Թուրքիայի պարտութեան դէպքում 2.6000.000 մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսայի հովանաւորութեանը, եթէ հայ կամաւորները կռուեն Թուրքիայի դէմ: Թրքական բանակից, աքսորի ճամբաներից ու տարբեր վայրերից, նոյնիսկ հեռաւոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները զինուորագրւում են ֆրանսական բանակին՝ ստեղծելով Արեւելեան (Հայկական) լեգէոնը: Գեներալ Ալեբին 1918 թ. Հոկտեմբերի 12-ին Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշային յղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ՝ իմ հրամանատարութեան տակ հայկական զօրամաս ունենալուս համար: Նրանք կռուեցին փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցան յաղթանակի մէջ»: Պատերազմից յետոյ կնքուած Սեւրի պայմանագրով թուրքերին յաջողւում է լեզու գտնել դաշնակից տէրութիւնների հետ եւ ստիպել ֆրանսացիներին իրենց խաղաղապահ զօրքերը դուրս բերել Կիլիկիայից:

Ութամսեայ երկարատեւ ու յամառ, հերոսական դիմադրութիւնից յետոյ Հաճընն ընկնում է: Այն վերածւում է աննշան մի գիւղաքաղաքի՝ Սաիմբեյլի անուամբ:

Ինչպէս ցանկացած հայ, հաճընցին եւս կարողանում է փիւնիկի նման, թէեւ վիրաւոր ու սգաւոր, յարութիւն առնել՝ սփռուելով աշխարհով մէկ, եւ ապացուցում, որ հնարաւոր չէ սպանել նրան, ով չի ուզում մեռնել:

Աստիճանաբար սկսւում է հայրենադարձութեան ալիքը՝ մայր հայրենիք: Հայրենադարձուած եւ աշխարհասփիւռ հաճընցիների խնդրանքով Հայաստանի Սիլավոյ կոչուող բնակավայրը՝ ի յիշատակ Կիլիկիայի Հաճըն քաղաքի, 1958թ. Նոյեմբերի 4-ին վերանուանւում է Նոր Հաճըն: Այստեղ ճարտարապետ Ռ. Իսրայէլեանի նախագծով հիմնադրուել է նաեւ Կիլիկիոյ Հաճըն թանգարան-յուշարձանը, աշխարհասփիւռ հաճընցիները իրենց աջակցութիւնն են ցուցաբերում քաղաքի կրթական, մշակութային, առողջապահական, սոցիալ-տնտեսական բնագաւառներին: 1955 թուականին մի խումբ հայաստանաբնակ հաճընցիներ միաւորուելով, ստեղծում են Հայաստանի «Հաճըն» հայրենակցական միութիւնը՝ Գէորգ Գրբեկեանի գլխաւորութեամբ:

Հայաստանի «Հաճըն» հայրենակցական միութիւնը որոշել է մեծ շուքով տօնել Հաճընի ութամսեայ հերոսամարտի 90-րդ տարելիցը, որ լրանում է Հոկտեմբերի 10-ին: Արժէնթինայի «Հաճըն» հայրենակցական միութեան կենտրոնական վարչութիւնն ու Հայաստանի «Հաճըն» հայրենակցական միութեան խորհուրդը նախատեսել են գիտաժողով, Հաճընին նուիրուած նոր փաստագրական ֆիլմի ցուցադրում, շնորհալի հաճընցիների մասնակցութեամբ ցուցահանդէսի եւ Նոր Հաճըն քաղաքում ծառատնկի կազմակերպում, մեծարման ցերեկոյթ-միջոցառում, Հաճընի բարբառի, մանրապատումների, աւանդոյթների հրատարակում, ցեղասպանութիւնից մազապուրծ հաճընցիների՝ Պետրոս Գրիգորի Թուրսարգսեանի «Իմ կեանքը» վէպի եւ Կիլիկիայի 1600 որբերից մէկի՝ Երուանդ Յակոբի Փոստալջեանի ճակատագրի մասին պատմող փաստագրական գրքերի հրատարակումներ եւ այլն:

«Հաճըն» հայրենակցական միութիւնը հաւատում է, որ նմանատիպ միջոցառում-ծրագրերը կը դառնան հայապահպանութեան եւ ազգային գաղափարներն արժեւորելու ու տարածելու խթան:

**Հ. ԳՐԻԳՈՐԵԱՆ-ՃԱՐՊԻԿԵԱՆ**
**«Հաճըն» հայրենակցական միութեան ատենապետ**
**Հ. ՄԱՆՋԵԱՆ**

# ՍԽՏՈՐ «ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻՆ»- ԸՍՏ ՊԻՒԹԱԳՈՐԱՍԻ

### Դեղատոմս խոլեստերինի դէպքում

*Երեք լիտրանոց ապակէ տարայի մէջ դնել սեւ հաղարջի, բալի, սամիթի, ծովաբողկի տերեւներ, 1 կգ մաքրած սխտոր, 80 գր. աղ, աւելացնել եռացրած տաք ջուր այնքան, որ լրիւ ծածկի սխտորը: Բերանը փակել երկու տակ թանզիֆով, 4-5 օր պահել 15-22 աստիճան ջերմաստիճանի պայմաններում, ինչից յետոյ սխտորը կարելի է օգտագործել:*

*Երիտասարդութեան լեգենդար էլիքսիր այս բաղադրատոմսը մեզ է հասել դարերի խորքից, սակայն մինչ օրս էլ մասսայականութիւն է վայելում: Այն կազմել են տիբեթեան ժողովրդական բժիշկները:*

*350 գրամ սխտորից քամել հիւթ, խառնել 300 գրամ մաքուր սպիրտին:*

*Խառնուրդը լցնել լաւ փակուող տարայի մէջ եւ 10 օր պահել սառը տեղում:*

*Ապա 2-3 տակ ծալած թանզիֆով քամել եւ թողնել եւս երեք օր: Խառնուրդն ընդունել սառը կաթի հետ (50 գրամ կաթ մի չափաբաժնի համար)՝ համաձայն ստորեւ բերուող սխեմայի (նշուած է կաթիլների քանակն ըստ օրերի):*

*Տիբեթեան էլիքսիրի ընդունման սխեման*

*Ապա հարկաւոր է ընդունել օրը երեք անգամ՝ 25 կաթիլ 50 գրամ կաթի հետ, մինչեւ պատրաստած խառնուրդը վերջանայ: Այս միջոցը չի կարելի յաճախակի կիրառել: Խորհուրդ է տրւում երիտասարդացնող էլիքսիրն օգտագործել հինգ տարին մէկ անգամ:*

### Մաշկի սնուցում եւ խոնաւացում

*Սնուցումն ու խոնաւացումը հարկաւոր է յատկապէս չոր մաշկին, սակայն այս դիմակը ոչ յաճախ, սակայն կարելի է օգտագործել նաեւ այլ տիպի մաշկի դէպքում:*

*- Միմիանց խառնել 1 ձուի դեղնուցը, 2 թէյի գդալ բուսաիւղը, 1 թէյի գդալ գազարի հիւթը, 1 կաթիլ սխտորի թուրմը, 1 թ/գ թարմ կաղամբի հիւթը, 2 թ/գ սերուցքը, կէս թ/գ կիտրոնի հիւթը: Դեղնուցը հարել, աւելացնել մնացած բաղադրիչները, ապա բամբակով աստիճանաբար, մի քանի րոպէ ընդմիջումներով քսել դէմքին: Լուանալ տաք ջրով:*

### Ստենոկարդիա

*Առաջին օգնութիւն: Ստենոկարդիայի նոպայի ժամանակ՝ ցաւ զգալուն պէս, անյապաղ, առանց ծամելու կուլ տուէք մի փոքրիկ պճեղ սխտոր: Այս պարզ միջոցը շատ դէպքերում կարող է կանխարգելել սրտի նոպայի զարգացումը, կամ ամենաքիչը թեթեւացնել նոպայի ընթացքը:*

### Սրտի իշեմիկ հիւանդութիւն

*Մի գլուխ սխտորը շատ մանր քերիչով անցկացնել, որ դառնայ շիլայանման զանգուած, վրան լցնել 0,25 լիտր արեւածաղկի չռաֆինացուած իւղ, թողնել 24 ժամ: Խորհուրդ է տրւում խառնուրդը պահել սառնարանում: Օգտագործման եղանակը: Խառնուրդն ընդունել ուտելուց 30 րոպէ առաջ՝ օրը 3 անգամ՝ մի թէյի գդալ: Բուժման կուրսը՝ երկու ամիս, որից յետոյ հարկաւոր է մէկ ամիս ընդմիջում տալ, ապա անհրաժեշտութեան դէպքում կուրսը կարելի է կրկնել տարեկան երեք անգամ:*

### Հիպերտոնիկ հիւանդութիւն

*Այս հիւանդութեան ժամանակ (ցանկացած փուլում) ժողովրդական բժշկութիւնն առաջարկում է ամէն գիշեր ուտել 2 պճեղ սխտոր (որքան հնարաւոր է՝ կծու): Որոշ ժողովրդական բժիշկներ խորհուրդ են տալիս հիւանդութեան սրացման դէպքում մի պճեղ սխտոր ուտել նաեւ առաւօտեան՝ սոված փորին:*

### Թութք (Հեմորոյտ)

*- Մի գլուխ սխտորը մանրացնել, խառնել կէս լիտր կաթի հետ (ցանկալի է՝ թարմ): Խառնուրդը լցնել խոր թասի մէջ եւ նստել մէջը 20 րոպէից ոչ աւելի: Բուժման կուրսը՝ 7-10 պրոցեդուրա, օրը մի անգամ, ցանկալի է՝ քնելուց առաջ:*

*- Երկաթէ դոյլի մէջ դնել եռման աղիւս, վրան լցնել մանրացուած թարմ սխտոր, դոյլը փակել տախտակի կտորով, որի մէջտեղում փոքրիկ անցք է բացուած: Նստել դոյլից բարձրացող տաք գոլորշու վրայ: Այս միջոցը թեթեւացնում է ցաւն ու քորը:*

*- Տաք ջրով եւ հեղուկ օճառով լաւ լուանալ հետանցքը, ապա 2-3 րոպէ վրան դնել սխտորի հիւթով ներծծուած փափուկ կտոր: Պրոցեդուրան կրկնել մի քանի անգամ:*

### Կոշտուկների դէմ

*- Սխտորից երկարութեամբ մի շերտ կտրել, դնել կոշտուկի վրայ եւ կապել:*

*Փաթաթանը փոխել օրը 3 անգամ: Սովորաբար մի շաբաթ անց կոշտուկը սկսում է փափկել, եւ այն հեշտութեամբ կարելի է հեռացնել:*

*- 1-2 պճեղ սխտորը կաթի մէջ եփել, տրորել, գիշերը դնել կոշտուկի վրայ եւ կապել: Կրկնել ամէն օր: Բուժման կուրսը՝ 5-7 օր:*

### Սուր բրոնխիտի դէմ

*400 գրամ սխտորը մսաղացով աղալ կամ լաւ ծեծել: 24 հատ թարմ կիտրոնները կեղեւել, մաքրել նաեւ սպիտակ փառը, եւ հիւթը քամել: Կիտրոնի հիւթը խառնել աղացած սխտորին, ստացուած զանգուածը լցնել ապակէ տարայի մէջ, բայց բերանը փակել ոչ թէ ամուր կափարիչով, այլ կտորով կամ թանզիֆով:*

*Երեք շաբաթ պահել մութ տեղում:*

*Օգտագործման եղանակը: Միջոցն ընդունել օրը մէկ անգամ՝ մի թէյի գդալ, ցանկալի է քնելուց առաջ: Խորհուրդ է տրւում խմելուց առաջ խառնուրդին աւելացնել կէս բաժակ եռացրած տաք ջուր:*

### Յօդերի հիւանդութիւններ

*Յօդերի բորբոքումը կոչւում է արտրիտ, իսկ յօդերի ընդհանուր հիւանդութիւնը՝ արտրոզ: Դեֆորմացնող օստեոարտրոզի դէպքում յօդային ոսկրերի վրայ յայտնւում են հանգոյցներ, յատկապէս ոտքերի ու ձեռքերի մատների վրայ: Հիւանդութիւնը յաճախ ուղեկցւում է ցաւերով եւ ակտիւ շարժումների ժամանակ ճռթճռթոցով: Յօդատապը (պոդագրա) աւելի յաճախ հանդիպում է տղամարդկանց շրջանում. այն ուղեկցւում է սուր նոպաներով եւ ոտքի բութ մատի, ոտնաթաթի կամ ծնկի յօդի այտուցներով:*

*(Տարունակելի)*

# ՃՇԴՈՒՄ, ՀԵՐՔՈՒՄ...

*Տարունակուած էջ 14-էն*

*1915 թուական, արիացիների բնօրրան, արարչութեան երկիր, Հայոց Սրբազան Լեռնաշխարհը այրւում էր, նրա լեռների լանջերից ժայթքած ջրերով գետերը կարմիր կապած, վուշ վուշ անելով գնում էին հեռուներ: Եւ այդ նոյն թուականին, այդ լեռների ռանչպարները, իրենց հողի, իրենց կանանց պատուի, իրենց կեանքի համար զէնք էին վերցրել: Լեռներն իրենց որպէս վահան պահած, 53 օրերի մաքառման կռուի հինգ ճակատամարտերում, թշնամու յարձակող երեք հազար կանոնաւոր զօրքին եւ նրանց հետ եկած չորս հազար ընչաքաղց խուժանին պարտութեան էին մատնել: Պարտութեան էին մատնել նրանց յոխորտանքը: Լրագիրը շատ լաւ գիտէր թէ այդ լեռնականները տասնըհինգ թուին ուր էին եւ ինչու ու երբ էին գիւղերից հեռացել: Սակայն ապատեղեկացնում է ընթերցողներին, կեղծում պատմութիւն: Ֆրանսական ռազմանաւեր եկան, չթողեցին, պարէն ու զինամթերք չտուին, որ կռիւը շարունակեն: Չորս հազար երկու հարիւր լեռնականներին տարան հիւրընկալ Եգիպտոս, Փորթ Սայիտ նաւահանգստին մօտիկ Լազարէտտօ քարանտինատւան: 1919 թուականին համախումբ վերադարձան հայրենի գիւղեր, վերաշինեցին փլած տները, վերականգնեցին պարտէզները:*

*Ֆրանսական, Անգլիական քաղաքական խարդաւանքների եւ կեղծուած ընտրութիւնների արդիւնքով կայացած Ազգերի Լիգայի որոշման համաձայն, Սուրիայի կազմի մէջ գտնուող Ալեքսանդրեթի շրջանի տարածքը 1939 թուականին յանձնուել է Թուրքիային: Մուսա Լեռցիները փախան թուրքի ստուերից: Եօթանասուն ընտանիքներ մնացին բնակուելու իրենց չէներում, մեծամասնութեամբ Վագըֆցիներ:*

*Եօղուն Օլուգցի երեք ընտանիքներ չէին գաղթել, որոնցից հօրաքրոջս վեց հոգիանոց ընտանիքը: Ըստ լրագրի հաղորդման, 1940 թուականին եկեղեցու վրայ կառուցուած է մզկիթ մը: Ճիշտ է, որ մզկիթ կառուցուած է, սակայն շատ աւելի ուշ: Ըստ հօրաքրոջս տղայի պատմածի եկեղեցին վերածուել էր պահեստի: Անտիոքից գիւղ ժամանած մի պաշտօնեայ կարգադրել է եկեղեցին մաքրել, կանչել հօրաքրոջս, եկեղեցու բանալիները յանձնել նրան, արտօնել այն լինելու աղօթատեղի: Հօրաքրոջս տղան գիւղից հեռացել է 1944 թուականին, երբ դեռեւս եկեղեցու տանիքին մզկիթ կառուցուած չի եղել: Ճշգրիտ թուական չեմ կարող յայտնել, սակայն խիստ հաւանաբար այն պատահած պիտի լինէր գիւղ մնացած ընտանիքների Վագըֆլի փոխադրուելուց յետոյ:*

*Արեւմտեան Հայաստանում, հայկական Կիլիկիայում, Մուսա Լեռում բազում եկեղեցիներ վերածուած են մզկիթների եւ ինչո՞ւ նորը կառուցանէին: Պոլսոյ Պատրիարք Մութաֆեանի անձնական ջանքերով Վագըֆլի գիւղում, նախկին եկեղեցու տեղում, կառուցուել է նոր եկեղեցի: Օգոստոս ամսին, Սուրբ Աստուածածնի տօնի կատարման ժամանակ բազմաթիւ հայեր են ժամանում գիւղ: Անտիոքից, Անքարայից պետական պաշտօնեաներ են նաեւ մասնակցում տօնակատարութեանը:*

*Տեղական հայկական մի լրագրում հաղորդւում էր հրապարակուել (ճշգրիտ թուականը չեմ կարող յայտնել), որ պետական նախաձեռնութեամբ նորոգուելու է Եօղուն Օլուգի եկեղեցին եւ մզկիթի համալիրի հետ միասին լինելու՝ Իսլամ ու Քրիստոնեայ առաջին միատեղ կրօնական կառոյցը աշխարհում: Կարող է:*

# ԱՅՏԱ ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆԻ «ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԵՐԸ»

*Տարունակուած էջ 14-էն*

*լը, որ Համազգայինի Քնար պարախումբին հետ գործակցաբար աննախընթաց մակարդակով յաջողութիւն արձանագրած է մասնակցելով Պաալպէքի համալիբանանեան փառատօնին (festival): Աննախընթաց այս ձեռնարկը անգերազանցելի մնաց թէ՛ իբրեւ արուեստի կատարում եւ թէ՛ ազգային միասնականութեան օրինակելի նախընթաց: Պարզ յիշատակութեամբ մը անցած է երգչախումբի ղեկավար Տոքթ. Էմմանուէլ Էլմաճեանի եւ պարուսոյց Սարգիս Փասքալեանի վրայէն, որ պարի բաժնին տեղծագործ ղեկավարն էր, միաժամանակ ըլլալով նաեւ համալիբանանեան պարախումբին ղեկավարը: Փասքալեանի կողքին պէտք է յիշել Գեղամը, Սոնիա Փոլատեանը (Օրջանեան), Սօսի Փասքալեանը եւ Հրանդուշի Քեօշկէրեանը, իբրեւ մասնակի մենակատարներ:*

*Ինչ որ աններելի է՝ հայկական մականունի ԵԱՆ վերջաւորութեան խաթարումն է: Անգլերէնի կամ Ֆրանսերէնի մը ԵԱՆը IANի կը վերածուի եւ իբրեւ հայկական մականունի վերջաւորութեան համաշխարհային ճանաչում գտած է: Չենք գիտեր թէ ի՞նչ տրամաբանութեամբ կամ ի՞նչ իրաւունքով Այտա Պուճիգանեան ԵԱՆԸ EANի վերածած է:*

*Այսուհանդերձ, իր բոլոր թերութիւններով հանդերձ, լիբանանահայ պատմութեան մասին օգտակար աշխատանք մըն է:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

Հայ news am

# ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱԿԻՐՃ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 8-էն*

Ձեռնարկներով աւելի ուշագրաւ ձեւով սկաւ ճանչցուիլ Լոս Անճելըսի հայ համայնքին մէջ: Թղթագիրներ, բանաստեղծներ եւ գրագէտներ, Պոլիսէն հրաւիրուեցան այցելելու Միութիւն՝ բանախօսելու եւ բաժնեկցելու իրենց փորձառութիւնները մեր անդամներուն հետ: Հայկական դպրոցներու միջեւ կազմակերպուեցան շարադրութեան մրցումներ, հայ գրականութիւնը յառաջացնելու մտօք՝ երիտասարդ հայորդիներու միջեւ: Քաղաքական եւ Եկեղեցական առաջնորդներ յաճախ հանդիպումներ ունեցան Պոլսահայ Միութեան մայր Վարչութեան անդամներուն հետ Լոս Անճելըս իրենց այցելութիւններուն ընթացքին: Յաջորդող տարիներուն, Տօքթ. Արթօ Ֆրսան-Խաչրեանի ատենապետութեամբ, գործունէութիւնները աճեցան եւ Միութիւնը եղաւ բարձրօրէն ամենագործօն միութիւնը Լոս Անճելոսի հայ համայնքին մէջ, նաեւ «Ձայն» պարբերաթերթը եղաւ պաշտօնական հրատարակչութիւնը Պոլսահայ Միութեան:

Մինչ ԻԱ. դարու մէջ էինք, Մայր Վարչութիւնը անգամ մը եւս Տօքթ. Վահրամ Պիրիճիքի ատենապետութեամբ սկսաւ փնտռել առիթ մը, շէնք մը գնելու համար: Վերջապէս, 2001ին, Միութիւնը իւրացուց ներկայ շէնքը Լոս Անճելըսի Winnetka արուարձանին մէջ, իր հիմնադրութենէն 25 տարիներ յետոյ: Գնման գինն էր $820,000.00: Միութեան շէնքը ծախու առնուեցաւ առանց դուրսէն պարտքի գումար առնելով, այլ՝ գործածուելով Կրթաթոշակի ֆոնտերուն տարամադրելի 155,000.00 գումարի աղբիւրները: Հարկ չկայ ըսելու թէ փոխ առնուած ֆոնտերը նուիրատուներուն կողմէ մէկդի դրուեցան կրթաթոշակի համար, ամենամօտիկ ժամանակին ետ վերադարձուելու մտօք: Շինարարութեան նորոգութեան պայմաններու վերաբերեալ աշխատող անձ մը նշանակուեցաւեւ շուտով շէնքին կարգ մը փոքր բարելաւումներ կատարուելէ ետք, 2002 թուին, Պոլսահայ Միութիւնը սկսաւ իր գործունէութիւններուն՝ իր նոր տան մէջ: Անգամ մը եւս նոր շրջան մը սկսաւ մեզի համար նոր վայրի մը մէջ, որ կոչուեցաւ մեր նոր տունը: Մինչ Հայաստանի ազդեցութիւնը սկսաւ աճիլ Սփիւռքի վրայ, Միութեան անդամները կանխատեսութիւնը ունեցան ընդլայնելու Պոլսահայ Միութեան Յանձնախումբերու առանձին, գործելով անոր հովանիին տակ: Hyeties Յանձնախումբի ընդմէջէն, որեւէ վայրէ եկած հայեր կրնային անդամ ըլլալ եւ գործնապէս մասնակցիլ Միութեան գործունէութիւններուն: Այն ժամանակ Պոլսհայ Միութիւնը ընդլայնեց իր գործունէութիւնները թէ՛ մշակութային եւ թէ մարզական գետիններու վրայ, հրաւիրելով բազմաթիւ անհատներ Հայաստանէն եւ Պոլիսէն, արուեստագէտներ, երաժիշտներ եւ գեղանկարիչներ ցուցահանդէսներու եւ դասախօսութիւններու համար: Հայ եւ Թուրք փրօֆէսորներ ու մտաւորականներ, որոնք հրաւիրուեցան նաեւ բանախօսութիւններեւ արծարծումներ կատարելու, բերելու համար յաւելեալ իրատեսութիւն՝ հայ դատին նկատմամբ:

2004ին, Նորակազմ Մայր Վարչութիւնը, Սիմոն Աճիլաչօղլուի ատենապետութեամբ, միութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով որոշեց միւս կազմակերպութիւններու կողքին, մասնակցիլ Ապրիլ 24ի Մեծ Եղեռնի Ոգեկոչման արարողութեանց որ ամէն տարի տեղի կ'ունենայ Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ: Դարձեալ, նորակազմ Վարչութիւնը, իր երիտասարդ անդամներով, որոշեց նաեւ յանձն առնել վերոյիշեալ ծախու առնուած շէնքին լրիւ վերանորոգման աշխատութիւնը զայն վերածելու համար մշակութային եւ ընկերային կեդրոնի մը: Այս ուղղութեամբ կազմուեցաւ շէնքի շինարարութեան պատասխանատու յանձնախումբ մը ատենապետութեամբ Սարօ Մարուքեանի: Յունիս 15, 2005 Չորեքշաբթի գիշեր տեղի ունեցաւ Պոլսահայ Միութեան որ շէնքին հիմնարկէքի արարողութիւնը բարձր ներկայութեամբ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Հոգեւորականաց դասու, քաղաքական ու կրթական ղեկավարներու, ինչպէս նաեւ Պոլսահայ Միութեան անդամներու, համակիրներու եւ բարեկամներու: Արարողութեանց շարականները երգուեցան Խաչատուրեան Դպրաց Դաս եւ Կոմիտաս երգչախումբի մաս մը անդամներու կողմէ: Շինարարութեան ընթացքին, միութիւնը առժամաբար իր գրասենեակը տեղափոխեց Van Nuysի Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցւոյ կողմէ տրամադրուած սենեակի մը մէջ՝ հաւանութեամբ եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ՝ Տ. Շնորհք Աւ. Քհնյ. Տէմիրճեանի եւ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին:

Միութեան նոր կեդրոնի շինարարութեան աշխատանքներուն իրենց աջակցութիւնը բերին Մայր Վարչութեան անդամները անխտիր, մասնաւորապէս Սիմոն Աճիլաչօղլու եւ Սարօ Մարուքեան, որոնց ջանքերով է որ մէջտեղ եկաւ այսօրուայ գեղեցիկ եւ հոյակապ համալիրը: Իսկ Միութեան արդի խոհանոցի կազմութեան աշխատանքի իր բաժինը ունեցաւ Յակոբ Հալըճը, օգնութեամբ Մայր Վարչութեան անդամներուն: Հարկ չկայ ըսելու թէ, այս իրագործումը իրականութիւն չէր դառնար եւ բնաւ չէր կրնար նիւթականացուիլ առանց Միութեան անդամ ու անդամուհիներու եւ համակիրներու սրտաբուխ նուիրատուութիւններուն՝ մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Կարապետ եւ Մարիամ Ագբուլաթի բնակարանին մէջ տեղի ունեցած դրամահաւաքի ճաշկերոյթի ընթացքին:

Այսպէսով, Միութեան կալուածը ծախու առնուելէ ինը տարիներ ետք եւ շինարարութեան սկսելէ հինգ տարիներ յետոյ, Սեպտեմբեր 12, 2010 Կիրակի կէսօրէ յետոյ, Նորակառոյց շէնքը պաշտօնապէս իր դռները պիտի բանայ հանրութեան դիմաց:

Այս նոր շրջանին, Պոլսահայ Միութեան գլխաւոր Նպատակակէտները եւ առարկայակէտերը կը մնան հետեւեալները.

- Պահպանել Հայկական ժառանգականութիւնն ու մշակոյթը իր գրական, կրթական, մարզական եւ այլ բարեսիրական միջոցներով:
- Հայթայթել կրթաթոշակներ, հայ ծագում ունեցող աշակերտներու եւ քաջալերել անոնց բարձրագոյն ուսումը:
- Քաջալերել Հայ երիտասարդներու մարզական արժանիքը:
- Հայթայթել օգնութիւն Հայ ընտանիքներու, ուսանողներ եւ անհատներու, ուղղութեան, նիւթակնա օգնութեան, գործի ապահովման եւ լեզուներու ծառայութեանց ծրագիրներու մարզերուն մէջ:
- Քաջալերել եւ յառաջացնել հայ գրականութեան ծաղկումը հայերէն եւ անգլերէն հրատարակութիւններու ճամբով:

Այսօր Պոլսահայ Միութեան Խնամակալ Մարմնի Վարչութեան եւ Մայր Վարչութեան կողքին, հետեւեալ Յանձնախումբերը կը գործեն Միութեան հովանիին ներքեւ: Տիկնանց Յանձնախումբը, Մշակութային Յանձնախումբը, Երիտասարդաց Յանձնախումբը, Կրթաթոշակի Յանձնախումբը, Էսայեան, Կեդրոնական եւ Մխիթարեան Սանուց Մութիւնները, Hyeties Յանձնախումբը, Մարզական Յանձնախումբը եւ Նորակազմ Փոքրերու Ակումբը: Ներկայիս, Պոլսահայ Միութիւնը ունի մօտաւորապէս 1000 անդամ: Միութիւնը կը քաջալերէ եւ կը հրաւիրէ բոլոր հայերը անդամագրուելու, չնայած իրենց ծագումին, յառաջացնելու աճեցնելու համար հայ մշակոյթն ու ժառանգականութիւնը:

Պոլսահայ Միութեան առաքելութիւնը յարատեւ յառաջացման եւ յաջողութեան ընթացքին մէջ է: Մենք կ'ուզենք մեր երախտագիտութիւնը յայտնել մեր բոլոր անցեալի եւ ներկայ անդամներուն իրենց օժանդակութեան եւ ծառայութեան համար Միութեան հանդէպ որ անցնող երեսուն չորս տարիներու յաջողութիւնը կարելի դարձուցին: Այսօր, ինչպէս միշտ, մենք բաց թեւերով բարի գալուստ կը մաղթենք նորեկ անդամներուն որոնք կը փափաքին միանալ մեր առաքելութեան: Այս նոր Կեդրոնը վայր մըն է, ուր բոլորս կրնանք զայն կոչել «Տուն, «Մեր Տունը», «Հայ Տուն»: Շնորհակալութիւն կը յայտնենք սոյն շէնքի կառուցման ձեր աջակցութեան համար եւ կը հրաւիրենք բոլորդ օգնելու մեզ, զայն դարձնելու համար վայր մը, կոչուած՝ «Մեր Տունը» ոչ միայն մեր կողմէ, այլ նաեւ ապագայի բոլոր սերունդներուն կողմէ:

*ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՇԷՆՔԻ ԲԱՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ*

# ԱՂԹԱՄԱՐ. ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՀԱՐԸ

*Շարունակուածէջ 8-էն*

Տասներորդ դարու հայկական արուեստի ամենաթանկագին օրինակներէն մէկն է ան, որ մինչեւ այսօր կը գոյատեւէ իր ճարտարապետական հոյակապ կառոյցով ու եզակի գեղեցկութեամբ:

84 տարիներու լռութենէ ետք, Սեպտեմբեր 19, 2010ին Ս. Խաչ վերստին պիտի բանայ իր դռները մատուցելով Ս. Պատարագ: Վերջին անգամ այնտեղ եկեղեցական արարողութիւն տեղի ունեցած է 1916ին: Ներկայիս Թուրքիոյ կառավարութիւնը արտօնած է, որպէսզի եկեղեցիէն ներս արարողութիւն կատարուի եւ պաշտօնական Թուրքիան տանելով քարոզչական մեծ աշխատանք, կ'ակնկալէ հազարաւոր այցելուներ, ներառեալ Թուրք, հայ եւ օտար լրատուական միջոցներ: Աւելի քան 5,000 ընտանիքներ Վանի մէջ պատրաստ են իրենց բնակարաններէն ներընդունելու հիւրեր, որովհետեւ քաղաքին հիւրանոցներէն ներ արդէն իսկ ազատ սենեակներ չկան: Լրատուական վերջին հաղորդագրութիւններու համաձայն, Ս. Էջմիածինէն բարձրաստիճան երկու հոգեւորականներ պիտի մասնակցին արարողութիւններուն:

Այս ոգեւորութեան տակ, օրերս հրապարակ պիտի ելլէ «Աղթամար» Հայկական Ճարտարապետութեան Գոհարը» գիրքը Լոնտոնի «Կոմիտաս» հիմնարկի եւ Իսթանպուլի Պիրզամնլար հրատարակչատան կողմէ, խմբագրութեամբ «Կոմիտաս» Հիմնարկի ղեկավար Արա Սարաֆեանի: Այս գիրքը արդիւնք է հայ ուսումնականութեան լաւագոյն տարրերու աշխատանքին, նպատակ ունենալով ժամանակակից Թուրք հանրութեան հայթայթել պատմական ակնարկ մը շրջանէն ներս հայութեան ներկայութեան եւ անոնց ներդրումին մասին:

Նոր հրատարակութիւնը անգլերէն եւ Թրքերէն լեզուներով լոյս պիտի տեսնէ Սեպտեմբեր 12, 2010ին:

Աղթամարի տօնակատարութիւնը անկասկած դուռ պիտի բանայ Անատոլուի (Փոքր Ասիոյ) հայութեան ժառանգութեան մասին աւելի լայն քննարկումներու: Կարգ մը հայեր եւ Թուրքեր այս կը տեսնեն որպէս դրական պատեհութիւն մը, քաջալերելու աւելի խորունկ բանավէճեր Թուրքիայէն ներս:

«Աղթամար. Հայկական Ճարտարապետութեան Գոհարը» հրատարակութիւնը իրականութիւն դարձաւ ազնիւ մեկենասութեամբ Լոս Անճելըսի Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետներու Համախմբումին, ինչպէս նաեւ շնորհիւ Լիզպոնի Կիւլպէնկեան Հիմնարկին եւ Լոնտոնի «Արարատ Ժառանգութեան»: Հ.Բ.Ը.Մ.ի Ասպետները 2002էն ի վեր կը կազմակերպեն դասախօսութիւններ եւ հրապարակային ասուլիսներ Հարաւային Գալիֆորնիոյ մէջ, մասնակցութեամբ հայ եւ Թուրք անուանի մտաւորականներու: Ասպետները անգամ մը եւս նախաձեռնութիւնը առին գումարներ մէջտեղ բերելու հրատարակելու համար այս գիրքը եւ այսօր երախտագիտութեամբ կ'արժեւորեն նուիրատուներուն քաջալերանքը: Հ.Բ.ԸւՄ.ի Ասպետները կը հաւատան, որ նման աշխատանքներ կարեւոր են եւ ճակատագրական դեր կրնան խաղալ զարգացնելով հայ-Թրքական յարաբերութիւնները երկխօսութեան, կրթութեան եւ իւրաքանչիւրը միւսին պատմութեան ու մշակոյթին ծանօթանալու միջոցով:

**Յ.Գ.** "Aghtamar" A Jewel of Armenian Architecture" - խմբագիր Արա Սարաֆեան: Այս գիրքը հիմնուած է Ստեփան Մնացականեանի «Աղթամար» աշխատութեան (Էրեբունի հրտ., 1986) եւ Documents of Armenian-Architecture-Aght'amar (Milano Italy" Edizioni Ares, 1974) հատորին վրայ, ինչպէս նաեւ ամբողջացած է նոր լուսանկարներով եւ բացատրութիւններով:

## «ՎԿԱՅԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ»

*Շարունակուած էջ 13-էն*

*ներուն հանդէպ Գերմանիոյ նացիներու գործադրած ոճիրներուն:*

*Պատանութեան եւ երիտասարդութեան շրջանին, Փիթըր Պալաքեան կը լսէ նաեւ իր մօրաքոյրներուն պատմածները հայկական ջարդերուն մասին:*

*Մօրաքոյրներէն մէկը՝ Փիթըրին կը պատմէ իր մօր զարմուհի Տօվիի (Աղաւնի) յուշերը, ինչպէս լսած էր անկէ. «Տիգրանակերտի մէջ խաղաղ կեանք մը կ'ապրէինք մինչեւ 1915-ի ամառը: Այդ ամառ կը լսենք, թէ քաղաքին մէջ խանութպանները կը տարուին անյայտ ուղղութեամբ: Մանուկներ չեն վերադառնար դպրոցէն, տղամարդիկ տուն չեն վերադառնար արտերէն: Կիներ, մասնաւորաբար երիտասարդ կանայք, կ'անյայտանան բաղնիքէն վերադարձի ճամբուն վրայ: Շատ խանութներ եւ գորգի մթերանոցը կը կողոպտուին քաղաքին մէջ: Հայկական դպրոցի Խանճեան անունով ուսուցիչ մը կը սպաննուի: Կը լսեն «տեղահանութիւն, ձերբակալութիւն, բանտ եւ կախաղան» բառերը: Այս բաները կը պատահէին Վանի, Կարինի, Սեբաստիոյ եւ ուրիշ քաղաքներու մէջ եւս:*

*Շուտով կացութիւնը կը վատթարանայ Տիգրանակերտի մէջ ալ: Զինահաւաքի խուզարկութիւններ կ'ըլլան տունէ տուն: Կու գան նաեւ իրենց տունը: Մայրը հօրը ատրճանակը կը յանձնէ: Թուրքերը կը հաւաքեն նաեւ միս կտրելու դանակները:*

*«Առաւօտ մը, երբ Աղաւնի կ'արթննայ, հրդեհի հոտ առնելով, իսլամական փաթթոց մը իր մարմնին շուրջն առնելով կ'իջնէ փողոց, ուր կիներու պոռչտուքի ձայներ կը լսէ: Երբ աւելի կը յառաջանայ, կը հանդիպի Թուրք ամբոխին, որ կը սկսի քարկոծել զինք: Աչքին մէկը ծանրօրէն կը վիրաւորուի: Պատերը շօշափելով եւ խարխափելով կը վերադառնայ տուն: Ամբողջ դէմքը վիրաւորուած էր: Յաջորդ օրը հայրը ճամբորդութենէն կը վերադառնայ:*

*»Օր մը երեկոյեան, Թուրք ոստիկանները իրենց տան դուռը կը զարնեն: Հօրմէն զատ ոչ ոք կը պատասխանէ: Քանի մը վայրկեան խօսակցութիւն տեղի կ'ունենայ. հայրը կ'ըսէ թէ ինք քրիստոնեայ ծնած է եւ քրիստոնեայ պիտի մեռնի: Յաջորդ առաւօտ երբ տնեցիները բակը կ'ելլեն, կը տեսնեն, թէ իրենց հայրը խաչուած էր բակին մէջ:*

*Աղաւնի օր մը առաւօտուն դուրս կ'ելլէ տունէն եւ կ'անցնի շուկային մէջէն: Թուրք ոստիկաններով շրջապատուած 10-15 հայ կիներ եւ մանուկներ կը տեսնէ հրապարակին մէջ: Ոստիկանները կը մտրակէին կիները եւ մանուկները՝ հրամայելով պարել: Կիները կ'աղօթէին: Քիչ ետք, ոստիկանները քարիւղ թափելով կ'այրեն զանոնք:*

*«Յաջորդ առաւօտ, Աղաւնի իր մօրը, քրոջը եւ եղբայրներուն հետ տեղահան կ'ըլլայ: Առաջին գիշերը կ'անցընեն Տիգրիսի ափերուն՝ բաց երկինքի տակ: Օրական տասնվեց ժամ կը քալեն: Իրենց ուտելիքի պաշարը երրորդ օրը կը հատնի: Ամբողջ ժամանակը անոնք ուտելիք ճարելու կը ճգնին: Հինգերորդ օրը Աղաւնիի տկար եւ հիւանդացած մայրը գետին կ'իյնայ ճամբուն վրայ եւ հոն կը մնայ:*

*«Կը շարունակեն քալել: Ոստիկանները կը մտրակեն եւ յաճախ դրամ կը պահանջեն: Անոնք սոսկալի վայրագ ոճիրներ կը գործեն, կը ծեծեն, կը չարչարեն, կը խոշտանգեն եւ կը բռնաբարեն: Աղաւնի եւս կը բռնաբարուի:*

*«Աւելի յառաջանալով, կը հասնին Եփրատի ափը, ուր կը հանդիպին հայոց դիակներու, որոնք շատ գէշ կը հոտէին: Հոս բազմաթիւ կիներ եւ աղջիկներ Եփրատը նետուելով անձնասպան կ'ըլլան՝ բռնաբարուելէ խուսափելու համար:*

*«Կարաւանը անապատային շրջաններ կը հասնի կոտորակուած վիճակով: Եղբայրը՝ Տիգրանը կը մահանայ: Աղաւնի օր մը աւազներուն վրայ գգայագիրկ կը քնանայ ու յաջորդ առտու ինքզինք կը գտնէ քիւրտի մը ձիուն վրայ: Այս քիւրտը զայն հինգ տարի կը պահէ: Ան քիւրտին երկու զաւակներ կու տայ»:*

*Ապա, Փիթըր Պալաքեան կ'անդրադառնայ իրեն ազգական Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեանի յուշերուն եւ վկայութիւններուն, կը մէջբերէ հատուած մը անոր՝ Պերլինի մէջ Թեհլիրեանի դատավարութեան վկայութենէն:*

*Հեղինակը համոզուած կը յայտնէ, թէ Հայոց Ցեղասպանութեան Թուրքիոյ ուրացումը մարդկային պատմութեան մէջ եզակի արարք մըն է:*

*Հեղինակն այնուհետեւ կը վերադառնայ իր մեծ մօրը՝ Նաֆինային: 1915-1918-ի ջարդերէն ետք, ան իր ամուսնոյն ԱՄՆ-ի քաղաքացի ըլլալուն հանգամանքով, բողոքագիր մը կը ներկայացնէ Թրքական իշխանութիւններուն, որու մէջ ան կը յիշէ իրենց ընտանիքի անդամներուն սպաննուիլը Թուրքերու կողմէ, իրենց ունեցուածքին գողցուիլն ու փճանալը եւ ամբողջ ազգի մը բնաջնջումը: Ան այս հարցը ներկայացուցած էր դատարանի մը, որ կը պատկանէր Արեւմուտքի եւ ոչ թէ Թուրքիոյ, որ քրիստոնեաները եւ փոքրամասնութիւնները կը ճնշէր եւ կ'իրաւազրկէր: Հեղինակը մտովին կը պատկերացնէ իր մեծ մայրը՝ Նաֆինան, երկու աղջնակներու 29 տարեկան այս մայրը, որ Հալէպի փողոցներուն մէջ 1915-ին հոս ու հոն կը շրջի՝ հին բարեկամներ եւ ծանօթներ գտնելու յոյսով: Նաֆինա վերջապէս կը փոխադրուի Նիւ Ճըրզի, ԱՄՆ, եւ իր վկայութեան ձայնը հին աշխարհէն կը բերէ դէպի Նորը:*


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք
հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net



# ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00



# ՔԱՋ ՆԱԶԱՐ
# ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից



# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.

Name: ------------------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :------------------------ Fax : --------------------------



# ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |






Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
ARMENIAN INDEPENDENCE DAY
FESTIVAL
Փառատօն
SUNDAY SEPTEMBER 26, 2010
VERDUGO PARK, GLENDALE
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
Cosponsored by the City of Glendale
Media Sponsors
Sponsors
To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938